

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական,

54^{րդ} ՏԱՐԻ, Զ. ՇՐՋԱՆ

թի 31

8 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1905

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Սիրոյ համար (խմբագրական) : — Աշխարհ (Բանաստեղծութիւն) : — Ժողկ Մարիա — ք Հերեթա (Իր մահուան առթիւ) : — Առնին կեանք եւ ալփամուրթիւն : — Եկուր աղուորս (Սիրեբոյ) : — Էօժէն Ֆրոմանթէն : — Օրուան Նօթեր : — Միջազգային պրնագանգ :

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՍԻՍ Շաբաթ օրի արեւելեան բաժանորդագիրն է Կ. Պոլսոյ համար քառսուն դրո. եւ գրաստանի ար յիսուն դրո., կանխիկ վճարելի : Արտասահման՝ 12 Ֆրանկ կամ 5 բուլ. արեւելեան ծախքը խմբագրութեան վրայ է : Վեցամսեայ բաժանորդագրութիւն չընդ. Բաժանորդագրութիւնները կը սկսին ամեն ամսոյ մէկին : ՄԱՍԻՍ հրատարակ կ'ընէ ամեն շաբաթ առօրէ : Զի հրատարակուած ձեռագիրները եւ չեն դարձուիր :

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ժանուցումներ, դիւրամասշէլի պայմաններով :

Ձեռն-Բէ կը ծախուի ՀԱՏԸ ՔԱՌՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ
Հասցէ

درعليده غلطه (ماسيس) غنقهسى ادارهسى

ԽՐԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Կ. Պոլիս, Ղալաթիա

Rédaction de la Revue MASSIS
Galata, Constantinople

Ծաղկաւոր

Թեւ, որ այսօր գրեթէ բոլոր ժողովրդաց գլխաւոր ըմպելիէն դարձած է, ա՛յնքան բաղձաթիւ տեսակներ ունի որ, արդարեւ գործածողներուն համար բաւական դժուար է լաւ ընտրութիւն մը ընել: Այդ տեսակներէն մասնք նշանաւոր են իբր Խաորտահաժ եւ քաղցրաբոյր, մասնք ալ թէեւ նոյնքան ախորժեի համ ու հոտ չունին, գերազանց են սակայն իբր կաշուերիչ եւ զօրացուցիչ: Վերջապէս իւրաքանչիւր թէյ իր ուրոյն յատկութիւններն ունին որոնք զինքը կը զանազանեն ուրիշ, տեսակներէ:



Սակայն կայ թէյ մը, որ այդ յատկութեանց մէկէն կարեւորները կը միացնէ իր վրայ, այսինքն՝ գոյն, համ, հոտ եւ մանաւանդ կաշուերիչ եւ զօրացուցիչ անզուգական ազդեցութիւն մը, եւ այդ թէյն է ձաբոնցի քէյը, որ այդ յատկութեանց շնորհիւ կը յարմարի մէկն ամբողջի ու կազմութեան. մէկն կրիմայի եւ եղանակի եւ մէկն ճաշակի:

Եսպրուեան եւ Իսպաղուեան քէյի մեծ վաճառատունը, իր բազմաթիւ յաճախորդաց ծառայութիւն մը մատուցանելու համար, այս անգամ մեծաքանակ ներածած է ճաբոնական զուտ թէյ մասնաւոր եւ դեղական աւիւրով ու կը հրաւիրէ օգտուիլ այս առիթէն բոլոր անոնք, որ կը փափաքին ունենալ թէյ մը:

Համով, հոտով, առողջապահիկ եւ կազդուրիչ:

Սոյն վաճառատան մէջ կան նաեւ հնդկական, չինական, Սէյլան եւ ծովային մեղան տեսակ թէյեր:

8-10

Ուսանողներէն մարգարի

ՏՈՔԹ. Բ. ԷՄԻՐՁԷ

Հանրածանօթ մանուկաբու եւ կնիքաբան(gynécologue), Տօքթօր Էմիւրզէ որ 15 տարուան գործունէութեամբը մեծ համբաւ ստացած է, կը ծանուցանէ յարգելի յաճախողներուն թէ բնակարանը փոխադրած է Պէքեար փողոց թիւ 18, Բաց ի վերայիշեալ իւր մասնագիտութենէ կը բուժէ նաեւ նորագոյն մէթոսներով ջղային եւ հոգեկան ու երեւակայական մէկն տեսակ հիւանդութիւնները, ինչպէս նէվրոսթէնի եւ tic անուանուած աչքի երեւոյթի եւ ուտեալ ագէղ եւ ակամայ շարժումները եւ դաշտանի դադարումէ յետոյ եկած ջղային խռովումները եւ Երիտասարդական մալիքները, ինչպէս նաեւ գինեմալիքը, մօրթիքնաժիւքը եւ այլն: Կիրակիներէն զառ մէկն օր կէսօրէն սկսեալ մինչեւ երեք ժամ հիւանդ կընդունի, եւ ուրաթ օրերը ճիւղաբար կը դարձանէ վկայեալ ողքատները: 8-10

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Գաղսնիք գեղեցկութեան, Առողջութեան եւ Երկայնակեցութեան, Բրոք. Պայալէյնըրտէ: Թարգմանեց Անգլիերէնէ, Սամուէլ Գ. Վարժապետեան: Կ. Պոլս. Տպագրութիւն, Յ. Մասթէսեան, 1905:

Հեռաքարտաւար, հրապարհիչ, զբոսայի եւ մէկն սեռի ու հասակի յուժ պիտանի գրքով մը 248 երեսներ բաղկացեալ: Թղթակազմին գինն է 8 դռն: Լաթակազմին՝ 10 դռն: 10է աւելի գնողներու 15 աւ հարկը եւ 50է աւելի գնողներու 20 աւ հարկը դեղէն վաճառման կեդրոնակներէն է Յ. Մասթէսեան թղթավաճառանցը եւ Պալէնց գրքատնը: 8-10

Ընդհանուր վիշտեր կան որոնք այս աշխարհածանօթ ղեղով կատարելապես
կը բժշկուին:



SCOTT'S EMULSION

Հաշարբուխ, և բոլոր որկորի և թոքի վիշտեր
ինչպէս թորացաւ, և պրօնշիտ, շնչառութեան և կուրծքի
երակներուն փորփոգումը և միւս տկարութիւնն պատ-
ճառող անհանդապարկութիւններ՝ անմիջապէս կը զսպուին,
և կը տկարացուին և վերջապէս կը բժշկուին: Նամա-
նաւոր ծիրական արտի նկատմամբ՝ առաջին նշանները
տեսնուած ատեն, անմիջապէս առաջը կ'առնէ: Եթէ
ընտանիքի մը մէջ այսպիսի աղետ մը կայ, պէտք
դեղարան մը դիմել և

ԸՍԳՕԹԻ ԲԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ

մը առնել: Ըսգօթի Բաղադրութիւնը այս աղետը կը
դադրեցնէ և տան մէջ ուրախութիւնը կը վերականգնէ:

Բոլոր բեղաբերիչ և բեղաբերիչ և բեղաբերիչ:

Հիշեցու վրայ ասոր ուշա-
դրութիւնն ընել պէտք է:
19

ՍՊԱՌՄԱՆ ՄՕՏ

Կ. Ա. ՈՍԿԵԱՆ

ԱՌՋԵՌՆ ԲԱՌԱԳԻՐՔ

Հայերէն - Գաղղիերէն

2րդ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Կը պարունակէ արեւի քան 25,000 քառ, ոն, եղն., գործածական
քառերուն ընտիր հանրաժողովը,

Պիսանի ամէն գործի մարդու — Անհրաժեշտ ամէն դպրոցականի

ԳԻՆ ՄԱՍԵՆ ԵՐԵՎԱՆԻ ԱՄՍԱՆՆ ԶԱՄԱՐ.

Քառքոնէ կազմ 25 դր., Ընտիր լաթակազմ 27 դր., Կաշեկազմ 32 դր.
1906 Յունիսար մեկէ վերջ երէտ սակարին անվանաւ օրինակներ մնացած
ըլլան, գիներուն վրայ զգալի յարեւումով մը միայն պիտի վաճառուին:

ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻ: Յ. ՄԱՏԹԵՈՍԵԱՆ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՆՈՑ

27, Ֆինանսներու Ամերիկան խան, Կ. ՊՈԼԻՍ

ԿԸ ԳՏՆՈՒԻ ԲՈԼՈՐ ԳՐԱՎԱՃԱՌԱՅ ԳՈՎ:

ՄԱՍԻՆ

54^{րդ} ՏԱՐԻ, 2. ՇՐՋԱՆ

ԹԻՒ 31

8 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1905

ՍԻՐՈՅ ՀԱՄԱՐ

(ԽՍԲԱԳՐԱԿԱՆ)

Սիրոյ համար անձնասպան...

Զպիտի հաւտայինք, եթէ հանրածանօթ ընտանիքի մը զաւակը չըլլար Պ. Բանտիա էվեէնիտիս և լրագիրները օրերով չպատմէին այդ տխուր տուամին մանրամասնութիւնները ու շարժառիթը որ սէր էր համակ: Սէր մը մաքուր, բանաստեղծական, Հելլէնուհիի մը գեղեցիկ աչքերուն ու խոպոպ մազերուն համար, ուղղակի սրտին ու հոգիին խօսող զգացում մը որուն մէջ ո՛չ ընկերային նկատում կար ո՛չ նիւթական տեսակէտ: Տեսակ մը հովուերգութիւն՝ աշխարհիկ կեանքէ, որ ժամանակակից հարուստ դասակարգի բոլոր պերճանքը կը կրէր իր արտաքին ձևերուն մէջ, առանց սակայն ներքնապէս ծածկելու անոր կեղծուպատիր հանգամանքները՝ ամուսնական տեսակէտով. զուտ վիպային յարաբերութիւն մը երիտասարդի մը ու ծաղկափաղ աղջկան մը միջև, որոնք կ'ուզէին ամուսնանալ՝ մի միայն զիրար սիրելուն համար: Տղան հազիւ քսաներկու տարեկան կար, ազնուական, ուսեալ, հարուստ. դէմքով համակրելի ու երեւոյթով վայելուչ. հրապուրիչ ասպարէզ մը ունէր իր առջև, — եթէ երբեք պէտք ունէր ասպարէզ մը ընտրելու իր նիւթական անկախ գիրքին մէջ, — և ապագայ մը զոր շատեր կ'երազեն՝ բայց քիչեր կ'իրականացնեն.

Եւ սակայն զտնակոխ ըրաւ այդ բոլոր վայելքները ու չուզեց ապրիլ, որովհետեւ չէր կրցած ամուսնանալ իր սիրած աղջկանը

հետ ուսկից կը սիրուէր նոյն տարփոտ ու անկեղծ զգացումով:

Ո՛չ ոք կը ծափահարէ անձնասպանութեան մը, զոր կրօնքը ու ընկերային բարքերը կը դատապարտեն հաւասարապէս. բայց Պ. Բանտիա էվեէնիտիս անձնասպանութեան շարժառիթը այնքան հոգեցունց պաշտումէ մը ծագում կ'առնէր, այնչափ աղուոր երազի մը խորտակումին դառնութեան տակ կատարուած էր, որ իր առաջ բերած տպաւորութիւնը հիացումով խառն վշտակցութիւն մը եղաւ:

Այս սկեպտիկ դարուն մէջ, ուր ճշմարիտ սէրը այնքան հեռու կը փախչի ամուսնութենէ՝ որքան ճշմարիտ բանաստեղծութիւնը նիւթապաշտութենէ, կարելի՞ էր չհիանալ ամուսնութեան ու սիրոյ այսքան իտէալ ըմբռնումի մը վրայ, որ երիտասարդի մը կեանքը իր ձեռքով խորտակելու չափ ուժագին ցնցում մը առաջ բերած էր:

Հին ժամանակներու ասպետական սէրերու մէկ արտացոլացումը կար կարծես այս սիրային տուամին մէջ որ կը կատարուէր պուրակի մը խորհրդաւոր լուսեանը մէջ, աշնային դալկահար լուսինը ունենալով իրեն վկայ ու ծովուն հեռաւոր օրօրումի երովը որոնք կեանքը անոյց կընծայեն ու ապրելու տենչը կը ներշնչեն ամէնէն յուսահատ աղքատին իսկ: Պ. Բանտիա արհամարհեց բնութեան բոլոր այս հրապոյրները, ինչօպէս արհամարհած էր հանգստաւէտ կեանքի մը բոլոր առաւելութիւնները:

Պրանսացի բանաստեղծին պէս, որ կը գրէր,

Կեանքի խնջոյթին անբաղդ կոչնական

Ինքն ալ անբաղդ կոչնական մը այն վերջին դաշտային հացկերոյթին որ կը արուէր իրենց գեղազուարճ պարտէզին մէջ, Վոսփորի վերայ, հազիւ չըթուենք զպցուց չամբանեալ բաժակին որ կը մատուակուէր լիառատ, սեղանակիցներէն հեռացաւ գնաց իր եղերական խորհուրդը գործադրելու։ Սէրը չէր ժպտած իրեն, կեանքը այլեւ նշանակութիւն չուներ իրեն համար։

Անձնաստանութեան փառաբանութիւնը չէ որ կընենք այս տողերով, այլ անձնաստանին սիրոյ ըմբռնումի մասին ունեցած մտատիպարին բարձրութիւնը կը հռչակենք։ Միեւնոյն օրուան մէջ ուր թերթերը ընդարձակօրէն կը նկարագրէին Պ. Էվեէնիտիսի որդւոյն տխուր ողիսականը, Լուրերու «արկածային» մասին մէջ, քանի մը տողով, կը ծանուցանէին նաեւ թէ Թանաչ անուն մարդ մը, ընտանիքով ծանրաբեռնուած ու վերջին ծայր աղքատ, ինքզինքը չոգենաւէն ծով նետած էր յուսահատաբար։ Հազիւ մտածողներ եղան. «Խեղճ մարդ»։ Եւ իրաւ ալ, եթէ անձնաստան Թանաչը անձնաստան Բանտիւի մէկ սպասաւորին չափ նիւթական հանդատութիւն մը ունենար, անկէ պակաս իսկ, թերեւս վերջ չիտար իր կեանքին։ Այդ դժբաղդ ծերունիին վիճակին բաղդատմամբ՝ այս երիտասարդը երջանիկ մըն էր, դիրքով հարստութեամբ, տարիքով, օրուն այնքան ըղձացողներ կային. ու այդ բոլորը զոհեց իր սիրոյն։ Իր անձնաստանութիւնը լսողները ցաւելէ առաջ ապշած մնացին. կարելի՞ էր այդ գերազոյն զոհողութիւնը՝ հոգեկան տառապանքի մը համար զոր սէրը կը ծնցունէր։ Հէգ երիտասարդին վիրաւոր գլուխը, ծաւի մը տակ ընկողմանած, իր լուռ ու ցաւատանջ տեսքովը կարծես փարատել կուզէր յափրացածներու և սկեպտիկներու այս տարակուսանքը՝ սիրոյ մասին։

Եւ եթէ այս տեսակ դժբաղդ պատահարէ մը կարելի է բան մը հետեւցնել, սիրային տուամէ մը ընկերային տեսակէտի մը անցնել

բաղդատեցէ՛ք հիմայ այս ինքնաստան հարուստ երիտասարդին մտածելու և զգալու եղանակը՝ մտածմանը ու զգացմանը հետ մէն անոնց որոնք արհեստական սէր մը կամ սիրոյ ձեւացում մը միակ միջոցը կը նկատեն բաղձացուած ամուսնութիւն մը կնքելու, որ աւելի հաշիւի վրայ հիմնուած է քան զգացումի. որոնց միտքը ու սիրտը կեդրոնացած է երազուած... դրամօժիտի մը վրայ որուն հետ կը նոյնանան իրենց համար՝ աղջկան մը հոգեկան ու մարմնական բոլոր ձիրքերն ու հրապոյրները։ Անկեղծ սէրէ զուրկ ու հաշիւի վրայ միայն հիմնուած այս ամուսնութիւնները չեն որ կը խանգարեն ընտանեկան կեանքերը, դժբաղդութեան օրօրաններ դարձնելով նորակազմ բոյներ։ Չենք ըսեր թէ մեր երիտասարդները սէրը այնքան բուռն կերպով առաջ տանին որ իրենց ըղձալի երեւցող ամուսնութիւն մը անկարելի դարձած պահուն՝ Պ. Բանտիտի տխուր օրինակին հետեւին. բայց սիրոյ մասնիկ մը, անկեղծ գորովանք մը, գէթ առաջին թելադրիչն ըլլայ իրենց ամուսնական խորհուրդներուն ու հետապնդումներուն։

Հապա աղջիկները։

Միթէ անոնց մէջ ալ չենք հանդիպիր նրբահասակ, երազուն աչքերով ու վիպական խօսուածքով էակներու, որոնք յանկարծ մերժած են զիրենք սիրող երիտասարդի մը ձեռքը՝ տարէց անձ մը ընտրելու համար, միմիայն նիւթական գերակշռութեան տեսակէտով, առանց խորհելու թէ ի՞նչ պիտի ըլլայ մօտաւոր ապագանին երբ այրը ծերունի մը դառնայ արդէն ու իրենք՝ դեռ մանկամարդ կին։ Աղջիկներ՝ որոնք փոխանակ իրենց տոք չունչովը կենդանութիւն, ալիսատեւու, յառաջդիմելու փափագ ներշնչել ուզելու համեստ վիճակի տէր երիտասարդներու զորս կրնային երջանիկ ընել, գլուխն կը դարձնեն արհամարհոտ, որովհետեւ սէրը պէտք եղածին չափ զօրաւոր չէ եղած իրենց մէջ ու կը վախճան որ, ամուսնութենէն ետքը, ցնդի անիկայ շոգիի պէս։



ՕՐՈՒԱՆ ՆՕԹԵՐ

Ամենայն Հայոց Ս. Հայրապետին կարգադրութեամբ՝ պետական վարժարաններումէջ հայ կրօնուսոյցները կա՛մ Գէորգեան ձեմարանէն և կա՛մ Ներսէսեան վարժարանէն ընթացաւարտ պիտի ըլլան: Հայրապետական այս կարգադրութիւնը գոհութիւն պատճառեւ է, որով պետական վարժարաններ յաճախող հայ աշակերտները պիտի ազատին կարգ մը անխիղճ, անհոգ և անուս կրօնուսոյցներու ձեռքէն և միանգամայն կարող պիտի ըլլան իրենց մայրենի եկեղեցիին ծէսերուն և աղօթքներուն տեղեակ ըլլալ, որովհետեւ յիշեալ պետական վարժարաններու հայ աշակերտները ոչ միայն «Հայր մեր» մը չեն գիտեր, կամ սխալ կը կարդան, այլ և չիտկէ շիտակ խաչ հանել ալ չեն գիտեր եղեր:

* * Կովկասի փոխարքան մանրամասն ծրագիր մը պատրաստեր է այն ձեւակերպութեան մասին, որով պիտի վերադարձուն հայ եկեղեցիներուն և դպրոցներուն կալուածները ու գոյքերը, և այդ ծրագիրը զրկեր է ներքին գործոց նախարարութեան ի հաստատութիւն, ուրկէ եկած պատասխանէն մինչեւ երեք ամիս ետքը՝ բոլոր Ռուսաստանի մէջ պիտի աւարտի յանձնումի գործողութիւնը, և կալուածոց մատակարարութեան համար հոգաբարձութիւններ կազմուած պիտի ըլլան: Հիմակունէ արդէն սկսած են բացուիլ դպրոցները և փոխարքային դիւանատունը ամէն շաբթու լուր կը հասնի Հայոց թեմական առաջնորդներէն, բացուած դպրոցներու մասին: Աստրախանի առաջնորդ Տ. Արիստակէս արքեպիսկ. Սեդրակեանց ծանուցեր է փոխարքայի օգնակաւին թէ իր թեմին՝ Վլատիկովկասի, Պիատիքորսքի և Ստաւրաբոլի մէջ Հայոց դպրոցները բացուեր են:

— Երուսաղէմի նախորդ եւմտական տեսուչ Տ. Ղեւոնդ Վրդ. Մաքսուտեան յայտնած ըլլալով Հաշուեքնիչ Յանձնաժողովին, թէ վանքի մեծ օթէլի վարձակալութեանէն

4000 ոսկիի պահանջը մը կայ՝ այս օրերս գանձելի, որ երաշխաւորուած է իր տեսչութեան օրէն, Ս. Պատրիարք Հօր միջոցաւ գիուեցաւ Երուսաղէմի Ս. Պատրիարքին որպէս զի փոյթ տարուի այդ պահանջը գանձելու և նոյն գումարը յատկացուի շինութեան գոյացած պարտքին:

* * Տ. Ղեւոնդ Վրդ.՝ Յանձնաժողովին առաջարկութեան վրայ՝ ձեռնարկած է պատրաստելու Երուսաղէմի Աթոռին կալուածական շինութեանց ցուցակը, յարակից ծանօթութիւններով:

— Ս. Պատրիարքը օրհնութեան գիր մը պիտի ուղղէ Եթովպիոյ արքունեաց խորհրդական Պ. Իլկի որ Ատիս—Ապպաի մէջ կաղմուած թաղ. Խորհուրդին պատուակալ նախագահութիւնն ստանձնեւ է: Ն. Սրբազնութիւնը նոյնպէս օրհնութեան գրեր պիտի ուղղէ տեղւոյն առաջնակարգ ազգայիններէն Պաղտասարեան էֆ.ի, Մաթիկ էֆ. Գէորգօֆի և ուրիշ վաճառականներու՝ Եթովպիոյ հայ գաղութին հոգեւոր գործերու մատակարարութեան ու կաղմակերպութեան համար իրենց նուիրած ջանքերուն առթիւ:

* * Վաղածանօթ գրագէտ—բանաստեղծ Ռուբէն էֆ. Որբերեան որ առեւտրական գործով Ճիպութի հաստատուած է բաւական ժամանակէ ի վեր, ընդարձակ նամակ մը ուղղած է Բիւզանդիոնի, Տ. Մկրտիչ քահանայ Զլգատեանի հոգեւոր այցելութեան պարագաները պարզելով: Որբերեան էֆ. որ այդ այցելութեան փափաքողներէն ու անոր յաջողութեանը աշխատողներէն մէկը եղած է, կը գրէ թէ Ճիպութի, Հարարի և Ատիս—Ապպաի մէջ 4000 ֆր.է աւելի գումար մը հանգանակուեր է՝ հոգեւոր այցելուն երթու դարձի ծախքերուն համար, և կ'աւելցնէ. «Տասնեակներով անկնունք երախաներ մկրտուեցան, պսակներ ու գերեզմաններ օրհնուեցան, ու երանութեան արտասուքներ թափեցան կարօտակէզ հոգիներու աչքերէն»:

ԱԶԳԵՐ

—*—

Անթիւ են գեղով, թոյրով, արքաւանքով,
Հոգւոյն եղեմին լուսանցքներն անգին,
Աչքեր որոնց տեղն է լայն սրբախ քով,
Որոնք մերթ հիմէն կը սարսեն հոգին:

Կապոյտ և կամ սև, ի՞նչ փոյթ, կուսական
Աչքեր կան որոնց խորքը անսահման
Մերթ չըքեղ արևն ու մերթ լուսնկան՝
Անհո՛ւն մարմիններ լըռին կուգան ման:

Սիրոյ, տարփանքի անբաւ ուկէաններ՝
Աչքերն ուր անվերջ իղձեր կը վառին .
Զոյգ լուսաւորներ զամուած աներեր
Ներքէն յօնքերու նըրբին կամարին:

Աչքեր պաշտելի՛ ըլլա՛ն ցանկավառ՝
Դիտակից կընօջ, կոյսի՛ն երկիւղած .
Մերթ հըրդեհումն է խորին, անբսպառ,
Ու մերթ երկչոտ իղձ, կամ շանթմ'անդրադարձ:

Դըթթումներն աղու, պըշնումներն աղւոր,
Աղօթքի, տաշտամ տենչերու նայուածք՝
Ի ու՛ր յառումներն անուշ, լուսաւոր,
Պերճախօսութիւն մ'ունին, սէ՛ր համակ:

Այդ դիւթական ցոլք-ակնարկներն ինքնին
Պարոյթներ չե՞ն որ հանուկի նըման
— Երբ կոյս բիբերուն մէջը կը ծաղկին —
Կա՛մ կը լուծուին, կա՛մ անլոյծ կը մընան:

... Զինջ աչքերու այդ ամբաւ աշխարհին
Մէջ ես սիրած եմ շողակներն անո՛ր
Որ իր Մատոնի նայուածքին հոգին
Սըրախ մէջ թաղեց՝ հուրքով մ'անսովոր:

Մ. ՌԻՆՈՒՐԼԵԱՆ

ԺՕԶԷ ՄԱՌԻԱ ՏԸ ՀԵՐԵՏԻԱ

(ԻՐ ՄԱՂՈՒԱՆ ԱՌԹԻՒ)

Լըքոնթ տը Լիլի ամենէն արժանաւոր անմիջական յաջորդն է Հերետիա որ, իր մեծ վարպետին պէս, հին պատմական դարերու առասպելային շքեղութեան և դիցաբանական հրաշալիէպերու անզարդ մեծվայելչութեան մէջ պատրուցած է իր միտքը, հանելով այդ շրջաններու ոգեւորութենէն և այլաբանական վսեմ իրադարձութիւններէն ինչ որ կայ մադղկային և բնական միանգամայն, — ամէն ինչ որ բնութիւնը կը ծառայեցնէ մարդկային հոգին հաստատելու՝ արտացոյցելու հզօր հանդիսաւորութեամբ մը։ Իր գործը գեղեցիկ է և մարդկային, անոր համար որ կրցած է դիցաբանական մութ շրջաններու բոլոր գերբնական գիծերն ու գերմարդկային արարքները դասական յըստակութեամբ մը կատարելապէս պատշաճեցնել մարդոց զգայարաններուն և զգացումներուն, առանց խեղաթիւրելու այդ շրջաններու մէջ պարփակուած գիծերը իր բանաստեղծի խիստ ընտրագիտութեամբ և հանդարտ վերլուծողի ու միաւորողի շէշտ առարկայադիտութեամբ։

Իր բոլոր բանաստեղծութիւնները մեզի ցոյց կուտան թէ պէ՛տք է որ դիք ապրած ըլլային հասարակ մարդոց դէմքով, և ասիկա՝ նոյն իսկ և մանաւանդ ի նպաստ բանաստեղծական ոգւոյն։ Թէ, միայն մտացածին ըլլալու պարագային իսկ և ատո՛ր համար մանաւանդ, պէ՛տք է որ ապրած ըլլային անսահման կեանքին երեւոյթին մէջ, այնպէս որպէս Հոմերեան տաղերը՝ ճշմարիտ բանաստեղծը կը տեսնէ կ'իւրակերտէ զանոնք շնորհիւ ա՛յն հանճարային թպաւրեցուցիչ (typificateur) կսրողութեան որով տրուած բարձր անձանթ մտապատկեր մը վաղուան առարկան կ'ըլլայ, ինչպէս Լէոն Տիէռքսի ամէնէն կարկառուն գործին՝ «Սթէլլա Վեսբէռայ»ին մէջ նկարագրուած գեղատիպար յետածին Ֆլորանսուհին որ նկարչին անըր-

ջաստեղծած կնոջ միեւնոյն նկարին միեւնոյն դիմագիծերով ի յայտ կուգայ յիսուն տարի վերջ։

Յունական դիցաբանութեան դէմքերն որոնցմով Հերետիա կազմած է իր գրականութեան մեծագոյն մասը, ո՛չ միայն յունական հանճար մը կամ հանճարներ կը պատմեն, այլ յունական հասարակ կեանքին ամէնէն կարկառուն գիծերը կը ցոյացնեն, հելլէն նկարագրին ամէնէն՝ իրական, ամէնէն՝ շեշտուած երանգները։ Բանաստեղծը կ'ընտրէ այդ երանգները, այդ գիծերը, ի խնդիր տիեզերական զգացումի մը։ Սյս ընտրագիտութեամբ որ մերթ սակայն անհաւասար է և ո՛չ նոյն եռանդով պահուած միշտ, Հերետիայի գործը կատարելապէս կը մտնէ արուեստին սահմանին մէջ, և իր՝ նիւթերու փոխառութիւնը որ ինքնին նուաստացուցիչ բան մըն է, գրեթէ միշտ անհատական գեղեցիկ յղացումի մը համահաւասար երանգներ կ'առնէ։

Հերետիայի «Hercule et les centaures» խորագրուած բանաստեղծութեանց մէջ՝ Նեստոր, ա՛յն կենդաւորոսը որ Հերակլէսի կինը՝ Տէթանիրը առեւանգել ուզած միջոցին Լէոնի հիդրային նետով կըսպանուի Հերակլէսէն, և մեռնելու պահուն, իբր զղջումի և ամուսնական հաւատարմութեան թալիղման՝ իր պատմուածանը կուտայ Տէթանիրին, սա՛պէս կը խօսի «Լեոններուն սառած հեղեղները կը լուային իմ չէկ մազերս. — երջանիկ, գեղեցիկ ու արձակ՝ մեծցայ այսպէս արեւին տակ — բայց այն օրէն երբ տեսայ Տէթանիրը — տեսչը դիս կը տանջէ, կը ցցուեցնէ մազերս, — որովհետեւ անողոք աստուած մը մորթիս տակ դրաւ սէրը որ կը նուաճէ կը պղտիկցնէ մարդը»։

Պոետայական մը միայն պիտի արտասանէր այս վերջին խօսքերը, Հերետիա հնդիկի մը աչքով կը դիտէ յունական աստուածները։ Ոչ միայն Լը Բոնթ տը Լիլի բանաստեղծութեանց արուեստագիտական ձեւին և անոր նախասիրած նիւթերուն սահմանին մէջ է որ կը շարժի, այլ նաև վարպետին դաւանական մոռածումներուն մէջ։ Յունական աստուածներուն լուսասպիտակ մեծվա-

յելլութիւնը, անոնց դիմագիծերուն վէս խաղաղութիւնը, անոնց կանգնազեղ իրանին ամբողջ կտորուածքէն շրջագծէն լուսաափիւռ կաթող լրացած ներդաշնակութիւնը, անոնց ստուերներուն ու լոյսերուն անճառ համեմատութիւնը, հիախառնումը, — Լըքոնթ տը Լիլի և իր աշակերտին մէջ կազմակերպել տուած են բանաստեղծական ձեւը, արուեստագիտական բովանդակ պնդանունչ լուսաափտիղ բարբառը։ Իրենց բանաստեղծութեանց ձեւը մարմարակերտ լուսաղօծ տաճարի մը դաշն տպաւորութիւնը կ'ընէ, չորս կողմէ լա՛ւ սիննապատուած, միմիայն լոյսին վայելքին համար դաշնակերտուած կարծե՛ս։ Բայց բանաստեղծութիւնն ինքը, բանաստեղծական թուիչն ու մտածումը այդ յուսական աստուածներուն լուսաթպիտ կատարելութենէն չի բղխիր, այլ պուտտայական մտածումէն։

Իրաւ է թէ Հերետիա ունի իր վարպետին ամենալայն արեգակնափայլ վերացումները, անոր մտաւորական սաստկութիւնը, իմացական անխոնջ կորովը՝ որ արուեստագիտական բոլոր զգայութիւնները կը միաւորէ, կ'իտէացնէ՝ մտքին վերացումներն յարգարեւու ու պայծառացնելու համար այդ զգայութիւններով, անոր խորաթափանց յստակատեսութիւնը որով գիտէ ըմբռնել հնդկական, նորվեկեան և յունական հանճարները այնպէս որպէս ո՛չ ոք իրմէ առաջ կրցած է ըմբռնել և իւրակերտել, անոր պայծառ անվրէպ հանդարտութեան հանճարային կամքը որով կը մերձենայ ամէնէն խիզախ վերացումներուն, անոր վերանցական անշահախնդրութեան առարկայագէտ լեռնագիծ կորովը. — սակայն Հերետիա, ասոնց փոխարէն, աւելի՛ զգացում կ'արտայայտէ, աւելի մօտ է մարդկային սրտին, որքան ալ կը ջանայ պահել իր վարպետին օլիմպեան հանդերձութիւնը, որքան ալ պուտտայական ցուրտ վերացումներուն դաժան հրապոյրն իր մէջ կ'արձագանգէ։

Հերետիայի բանաստեղծութեանց մեծագոյն մասը սօցեի ձեւին տակ կը ներկայանան, որ ի ճահ կուգայ իր ատտիկեան ճա-

շակներուն, իր հռովմէական սակաւապէտ՝ խտացնող դասականութեանը. բայց հարկ է ըսել թէ սօցե՛ն, այդ կարճ փախստեայ ձեւը կը վլասէ յաճախ իր մտածումին ընդարձակութեանը, իր վերացումին ամբողջական արտայայտմանը։ Հերետիա հարկերներով սօնէ գրած է, բայց անոնցմէ քիչերն են որ թէ ձեւով և թէ մտածումով ամբողջական ըլլան, բանաստեղծական լրումին հասած և արտայայտման խանդն հանդարտեցուցած ըլլան։ Իր Les Trophéesին մէջ մեռեալիմ աղօթքի յաջողած սօնէ մըն է, չա՛տ զգայուն։ Այսպէս, այն սօնէներն ուր զգացումն առաւելակիւ է, յաջողած են, բայց անոնք ուր վերացում մը՝ մտաւորական մտածնական պատկեր մը կ'ուզէ ամբողջովին ի յայտ գալ՝ արուեստագիտականօրէն, գրեթէ յաճախ չեն բաւեր այդ սօնէներուն վերջին երեք տողերը. — Մեռեալիմ աղօթքի դիմառնութեան ձեւին տակ, զգացում է համակ։

Իսկ այն երկար պատմական բանաստեղծութիւնները որոնք կը ճոխացնեն ֆրանսական գրականութիւնը հմտական exautique բառերու ահագին պաշարով մը, անոնց համար մասնաւոր բան մը չկայ ըսելիք։ Երբ Հերետիա այդ exautique բառերու պաշարը յայտնի չընէր իր գերազանցապէս արուեստագիտական զգայութիւններուն մէջ, այնպէս որպէս Ֆլուպէս յայտնի չընէր իր Սալամպօլին մէջ, երբ իր խուզարկումի ճիգը կը ձգտի գոհացնել միայն արուեստագէտին զգացումները և ոչ թէ ցուցամուրութեան տանիլ զինքը, կը սիրեմ զինքը։

Իր և մանաւանդ Լը Դոնք տը Լիլի գործը մասնաւորապէս չեշտուած հարկ մը ցոյց կուտան մեզի, իբր գեղեցիկ յղացում մը իրենց արուեստագիտական տքնութիւններուն. — ա՛յն է միացնել հնդկական հանճարը յունական հանճարին հետ, ձուլել երկու արուեստները այնպէս ինչպէս կը մտածէ իրենց բանաստեղծ բարեկամը Ժան Լահոտ։ Այս ձուլումը գերազոյն դաստիարակութիւնը պիտի ըլլայ մտքին անոնց համար որոնք, անհատապաշտ քմայական ցուցամուրութիւններէ՝ զգայամեղկ տիլէթթանթիզմէ հեռու։

մարդկային մտքին ուղիղ բնաշընթեան կը հետեւին, Դիօնիսոսի զուարթութիւնը Պուտտայի տխրութեան հետ կը միաւորեն, աստիկեան պայծառութիւնը հնդկական վերացումներու դաժան ցոլարտ եթերին մէջ կը սփռեն:

ԵԴՈՒԱՐԴ ԳՕԼԱՆՃԵԱՆ

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՆՕԹԵՐ

Ժողէ—Մարիա տը Հէրէտիա 1842ին ծնած էր, Սիէրա-Մատրի լեռներուն մէջ, որոնք Քուպայէն անդին կը տարածուին: Հայրը Ամերիկայի առաջին գաղթականներէն էր, բայց մայրը Ֆրանսական ծագում ունէր: Տը Հէրէտիա, շատ երիտասարդ, Բարիզ եկաւ և ուսում առաւ Սէնլիսի մէջ, հնութեան դասական հեղինակները վերծանելով եռանդեամբ, որոնք հաստատ ու ընդարձակ կրթութիւնը մը վրայ դրին իր դաստիարակութիւնը: Յետոյ իր ծննդավայր կղզին՝ Բուպա դարձաւ. երկու տարի հետեւեցաւ Հաւանայի համալսարանին դասախօսութեանց, ուր սպաններէն ալ սորվեցաւ: Ֆրանսա վերագարծին, Էջօլ տէ Շարթ յաճախեց. 1860ին էր: Իր առաջին ոտանաւորները այդ միջոցին հրատարակեց նախկին Ռիվիէ ք Բառի մէջ, ինչպէս նաև ժամանակին պարբերական հանդէսներուն և օրաթերթերուն մէջ: Թէօֆիլ Կօթիէ, իր գրական փառքին գագաթնակէտը հասած այդ միջոցին, գոյ գիտէր այդ քսանամեայ բանաստեղծին ոտանաւորները, անստգիւտ ու պերճ:

Բարձրահասակ, յաղթամարմին, խիտ ու խառնակ մօրուքով, յոխորտ ու մռայլ նայուածքով, սպանիացի կտրիճի մը պէս եռանդոտ ու կռուայոյզ էր, գոռացող ձայնով: 1893ին միայն հատորի մը մէջ ամփոփեց իր բանաստեղծութիւնները: Լրագիրներու մէջ ցրուած իր ոտանաւորները ամէնուն ալ հիացումը գրաւած էին: Մաքուր Ֆրանսերէնի բոլոր սիրահարները կը պաշտէին լուսաւոր պատկերներու և վերադիրներու հեղինակ այդ բանաստեղծը, որոնք զանգակներու պէս

ձայն կը հանեն, տաւիղներու պէս կը նուագեն ու թանկագին քարերու պէս կը փայլին:

Իր Թրոնէէն դատ՝ երկու հատոր հրատարակեց, երկուքն ալ սպաններէնէ թարգմանութիւններ, պատմական գործ մը և արականաշարական պատմութիւն մը: Աս եղաւ իր գրական բովանդակ գործունէութիւնը: Ասով հանդերձ, 1895ին, Ֆրանսական Ակադեմիին ընդունուեցաւ և արձակ բանախօսութիւն մը արտասանեց արուեստի ու բանաստեղծութեան վրայ, իր նախորդին՝ Պ. տը Մազասի մասին խօսելով:

1901ին, Հանրի Պորնիէի տեղ կ'անցնէր Արսէնալի մատենադարանին մէջ, ու անկէ ի վեր հոն կ'ապրէր՝ երկրորդ յարկը դրանուող անշահ սենեակ մը:—«Հոս, կ'ըսէր, բոլն իսկ ԺԸ. դարը կը գտնուի և այս հին շէնքը գեղեցիկ յիշատակներ ծրարած է իր մէջ: Այս բնակարանը ապրած են Մէյն դըսուհիին ընտանիքէն անձեր կամ հետեւորդներ. նոյն ինքն դըսուհիին կը բնակէր տակի յարկը, որ այսօր իբր մատենադարան կը ծառայէ: Սէն-Սիմօն կը պատմէ թէ կարգ մը այցելուներ ճրքան հաճոյքով կուգային: Այդ բնակարանը տանիքին տակ կը գտնուի: Ամառը տաք կ'ընէ և ձմեռը՝ մարդ կը սառնի հոն: Բայց պատմական է ան, ու կը սիրեմ: Մենութեան մէջ կ'աշխատիմ հոն ու երջանիկ կըզգամ ինքզինքս»:

Դանձերով լեցուն այդ մատենադարանին մէջ գրապահի պաշտօնը շատ հաճոյքով կը կատարէր, ծայրայեղ գրասէր մը ըլլալուն համար: Ամէն առտու ժամը տասնին սրահ կ'իջնէր: Իր ընթերցողները կը ճանչնար և քովերնուն անցած ատեն ժպտաղին կը բարեւէր զանոնք, երբեմն խօսք մը ուղղելով: Իսկ պաշտօնեաներուն գալով, կը պաշտէին իրենց պետը որ ամէն բանի կը շահագորգուէր, մեծ հոգածութեամբ կը կատարէր իր վարիչի պաշտօնը, բարեացակամութեամբ կը հսկէր և ամէն բանի բարեօրոյման կ'աշխատէր անդադար:

Առտուն, մատենադարանին ընթերցանութեան սրահը կը լեցուի դպրոցականներով: Շարլըմանի վարժարանին աշակերտ

ները սովորութիւն ունին հոն թարգմանելու իրենց հրահանգները: Ոմանք ոչ-դպրոցական աշխատութիւններով կը պարապին և Պ. տը Հէրէտիայի կարծիքը կը հարցնեն իրենց գրական արտադրութեանց մասին: Անոնցմէ ոմանք ոտանաւորներու հաւաքածոյ կը բերեն:

Ժողէ Մարիա տը Հէրէտիա կը խոստանայ իրիկուան կարդալ ու յաջորդ օրը կարծիքը յայտնել, մինչ դեռատի պատանին աչքերը կը խոնարհեցնէ կարմրելով:

Ու ժողէ Մարիա տը Հէրէտիա իր սեղանին առջև կ'անցնէր, մինչև յաջորդ օրը երջանիկ զգալով ինքզինքը: Մեծ բանաստեղծը միշտ համակիր վերաբերում մը ունէր հանդէպ սկսնակ բանաստեղծներուն: Օրին մէկը երիտասարդ ճարտարագէտ մը ներկայացաւ իրեն, ու իր գրած մէկ վէպին նախափորձերու մասին խորհուրդ հարցուց:

—Աշխատեցէք, շատ աշխատեցէք, բայց շատ բան մի արտադրէք... հատոր մը՝ ամէն երկու-երեք տարին անգամ մը, ո'չ աւելի: Աս է գրական փառքը... Հարստութեան նախընտրեցէք զայն:

Իր հրատարակիին՝ Լըմէրի մօտ տարաւ երիտասարդ ճարտարագէտը, և ընդհուպ հրապարակ ելան քանի մը հատորներ: Այդ ճարտարագէտն էր Մարսէլ Բրէվօ, որ այսպէս փայլուն կերպով մուտ կը գործէր գրական կեանքի մէջ:

Գրագէտները, իրենց գրական սկսնակի շրջանին մէջ, միշտ սիրալիր ու անստիպատ առաջնորդ մը գտած են յանձին այդ մեծ բանաստեղծին: Ժողէ Մարիա տը Հէրէտիա շաբաթը մէկ անգամ գրագէտ բարեկամներ կ'ընդունէր իր սենեակին մէջ: Գրականութեան նկատմամբ իր ունեցած պաշտամունքին ապացոյցներէն մէկը սա է որ իր երեք սիրուն աղջիկներն ալ ամուսնացուց երեք տաղանդաւոր գրագէտներու հետ. Պ. Հանրի տը Ռէնէէ, Պ. Բիէր Լուիս և Պ. Մօրիս Մէնտրօն: Այսպէս գրագէտներու տեսակ մը ազնուական ընտանիք կազմած էր, որուն համբաւին իր մասնակցութեան բաժինը բերած է նաև տիկին Հանրի Ռէնէէ, բանաստեղծ ու վիպագիր:

ԱՌՏՆԻՆ ԿԵԱՆՔ

ԵՒ

ԱԼՔՈԼԱՄՈԼՈԹԻԻՒՆ(*)

Ծերունի բարեկամ մը որ ժամանակին կատարեալ արեցող մը եղած էր, օր մը իր ալքոլամոլութենէ հրաժարելուն պատմութիւնն ըրաւ. զոր նոյնութեամբ կը ներկայեմ. —

«Իրիկուն մը, ժամը կէսին ատենները, նշանաւոր հրաւիրուած ըլլալուս պատճառաւ, առանց գինեատուն այցելելու՝ սովորութեանս համեմատ՝ ստիպուած էի ուղղակի տուն երթալ: Ծամբան հանդիպեցայ անծանօթ արբիւ մարդու մը որ կորուսած իր ուշքը, կանոնաւոր և մաքուր լեզուն, անլուր յիշոցներու, կցկտուր և անիմաստ կոշտ զրոյցներու աղտեղի լորձունքներ ժայթքելով շուրջը կը գլորտկէր, պատէ պատ կը զարնուէր, առաջ ետ, ձախ ու աջ կ'որորուէր, կ'իշար ցեխերուն մէջ, կ'եղնէր դողդոջուն. արգահատեցայ իր այս ծաղու և նախատանքի նշաւակ վիճակին վրայ, և թեւ մտնելով՝ առանց հարցնելու թէ ո՞վ էր, տարի զինքը մինչև իր տանը առջև. դուռը բացուեցաւ, և մինչ կ'ուզէի իրմէն բաժնուիլ, չիռողուց զիս մարդը և խնդրեց որ տուն մտնեմ և սուրճ մը խմելէ յետոյ մեկնիմ: Ներողութիւն խնդրեցի, և չնօրհակալ ըլլալով կ'ուզէի մեկնիլ, բայց կարելի չեղաւ օձիքս ազատել. զղջացի կերպով մը՝ այս ծառայութիւնն ընելուս համար և ակամայ ներս մտայ: Սենեակ մը առաջնորդուեցայ, ուր լամբարի մը տկար լոյսը հազիւ կը լուսաւորէր կէս կահաւորուած սենեակը. այդ աղօտ լոյսով նշմարեցի տարիքոտ կին մը որ

(*) Ծ. Խ. — Այս պարզ՝ բայց տպաւորիչ յօդուածը, որ մօտակայ գաւառային քաղաքէ մը զրկուած է մեզ, կը հրատարակենք, ո'չ թէ հակալքողական մրցման ենթարկելու համար, որուն պայմանաժամը լրացած է երեք շաբաթէ ի վեր, այլ մեր սովորական յօդուածներու կարգին՝ նկատի առնելով մենք որ օգտակար հանգամանքը:

սենեակին վերի անկիւնը կծկուած նստած էր. տրեցողին մայրն էր հաւանօրէն՝ որ իր գինով տղուն տարուբերուելով ներս մտնելը տեսնելուն պէս հազիւ լսելի ձայնով մը՝ «ամէն իրիկուն այսպէս է, ա՛խ, քաշուելիք բա՛ն է այս», ըսաւ և երկու աչքերէն արտասուքի կաթիլներ սկսան հոսիլ: Դիմացի անկիւնը նստած էր ցաւաբեկ երեւոյթով մանկամարդ կին մը, գրկին մէջ ունենալով սիրուն մանկիկ մը և ծունգերուն վրայ՝ Յ-Ա տարեկան աղջիկ մը որ կը քնանար. սրտայոյզ երկար հառաչ մը արձակելով երեսը անդին դարձուց ամուսինին ամօթալի վիճակը չտեսնելու համար, և ըսաւ. — «ա՛խ, մեռնէի և էրկանս այս վիճակը չտեսնէի, Աստուած իմ, հոգիս ա՛ն»:

«Մարդը տեսնելով որ իր երեսը նայող և տեղէն շարժող չկայ և տունը սուգի կերպարանք առած է, բարկութենէն կատաղած՝ կնոջը վրայ վազեց անլուր հայհոյանքներով. բռնեցի թեւերէն և կեցուցի զինքը, ապա թէ ոչ մէկ հարուածով կինը և տղաքը գետին պիտի տապալէր. ա՛լ իմ աղաչանքներուս, յորդորներուս մտիկ ընող չկար, յանկարծ թոթվեց և մէկդի հրեց զիս և դարակէն երկու պնակ յափշտակելով գետին նետեց և ինքն ալ թաւալգլոր ինկաւ: Այս դղրդիւնէն և ամաններուն խորտակուելու ձայնէն աղջիկը արթնցաւ լալով, և կինը՝ տղան մէկ կողմ դնելով՝ ոտքի ելաւ ահաբեկ: Ամօթ և անպատուութիւն, ցաւ և սրտաբեկութիւն պաշարած էին հէք մայրը՝ որ երեսի վրայ ինկած էր, և դժբաղդ կիներն ու աղջիկը՝ որոնք մեծ շուարումի եւ վերջովման մէջ կը դողդղային:

«Այս յուզիչ տեսարանէն աղդուած՝ մտադրեցի այլ եւս բերան չառնել անիծեալ ալքովը որ այսքան չարեաց և ամբողջ՝ ընտանիքի մը դժբաղդութեան պատճառ եղած էր: — «Եղբայր, ըսի մարդուն՝ նստեցնելով զինքը, ես ալ կը խմեմ, բայց երբեք դո՛հ չեմ, որովհետեւ ուր որ ալքովի ունակութիւնը կայ, հոն այսպիսի տխուր եւ ցաւալի իրողութեանց պատկերներ պակաս չեն. մարդ կը կորսնցնէ իր հոգեկան վայելուչ դիրքը,

և տունը՝ որ սիրոյ, խաղաղութեան, սրբութեան, պատուոյ եւ համեստութեան նուիրական օթեւան պէտք է ըլլայ, կը կորսնցնէ իր չէնքն ու չնորհքը: Մէկտեղ երդնունք և խոստանանք թոթուել միանգամ ընդ միշտ ալքովին սա անարգ լուծը»:

«Մարդը սկսաւ ինծի նայիլ այնպիսի ողորմելի կերպարանքով մը որուն մէջ զըղջում և ապաշաւ նկարուած էր. նոյն պահուն հեծեծախառն աղօթքի եւ օրհնութեան միմունջներ կը բարձրանային հէգ մօր եւ կնոջ բերաններէն: «Տօ՛ւր ինծի ձեռքդ, ըսի անոր, եւ ձեռքը ամուր մը բռնած՝ խոստացի՛ր ինձ հետ միասին յանուն Աստուծոյ, ի սպառ հրաժարիլ ալքովէն»:

«Մարդը ինձ երկնցուց ձեռքը եւ ըսաւ. — Կերդնում, եթէ խոստանաս ինձ բարեկամ մնալ մինչեւ վերջը: — Այո՛, երդնունք, եւ ես կը փափաքիմ ձեր փոխադարձ բարեկամութիւնը վայելել մինչեւ վերջը: Սենեակը կարծես դրախտի մը փոխուեցաւ, պայծառութիւն եւ ոգեւորութիւն ստացաւ, երջանկութիւնն իր զուարթ բոյրը ծաւալեց: Հէք մայրը ուրախութենէն փառք կուտար Աստուծոյ. զաւա՛կս, Աստուած զրկեց քեզ հոս, այս ի՞նչ բարիք էր որ մեզի ըրիր, յաւիտեան պիտի օրհնեմ քեզ. իսկ խեղճ կինը չէր գիտեր ի՞նչ կերպով յայտնել իր երախտապարտութիւնը, անմիջապէս սուրճի դաւաթներուն քով վազեց, բայց ես ոտքի ելած «չնորհակալ եմ, ըսի, տիկի՛ն, նեղութիւն մի՛ կրէք, ուրախութիւնս անսահման է: Այս իրիկուն երկու ընտանիք միասին փրկուեցան, վաղը իրիկուն կնոջս հետ առաջին այցելութիւնս պիտի տամ ձեզի, կ'արժէ որ միասին ուրախանանք եւ տօնենք այս եղական բարեդիպութեան եւ ուխտի ու բարեկամութեան յիշատակը. վաղը ժամը մէկին սպասեցէք, հիմա ներողութիւն, կինս ինձ կ'սպասէ. այս իրիկուն նշանուորի երթալու պարտանորած ենք եւ արդէն ուշացայ», ու նոր բարեկամիս, իր մօրը եւ տիկնոջ ձեռքերը սեղմելով մեկնեցայ:

Այս սրտաճմլիկ տեսարանին թարմ տպաւորութեանը տակ իսկոյն ինքզինքս գտայ

տանս դրանք առջև, ուր մեծ զաւակս պո-
ռաց, հայրիկն է՝ կինս մեծ զգուշաւորու-
թեամբ և փափկութեամբ ինձ մօտեցաւ, կը
կարծէր անշուշտ թէ գինեւունէն կուգայի
և սովորական իրիկուններու պէս գինովու-
թեան յատուկ դեգուծիւնները պիտի սկսէի,
ուստի դժգոհ երեւոյթ մ'ունէր՝ զոր կարելի
եղածին չափ կը զսպէր, երբ զուարթու-
թեամբ և զգաստօրէն բարեւեցի զինքը, ու-
րախութեան նշոյլ մը փայլատակեցաւ իր
դէմքին վրայ և մինչ ապշած՝ տարօրինակ
զուարթութեանս պատճառը կը հարցնէր ան-
համբերութեամբ, անմիջապէս երեք զաւակ-
ներս քովս կանչեցի, սիրով համբուրեցի
զանոնք, յետոյ կնոջս դառնալով ապահով-
ցուցի զինքը թէ վաղը իրիկուն ամէն ինչ
պիտի պարզուէր, և անպատում բերկրու-
թեամբ մը ճամբայ ելանք դէպի նշանուած
տունը։ Հոն բերանս օղի չառի և ոչ ալ
գինի։ ամէնքն ալ զարմացան իմ անձիս այս
անակնկալ փոփոխութեան վրայ և ուղեցին
պատճառն իմանալ, թախանձեցին որ ի՞նչ
տեղի ունեցած էր այն իրիկունը։ Այդ երե-
կոյեան խնջոյքին և ուրախութեան միակ ա-
ռարկան դարձայ, ամէնքը ինծի ակնարկելով
կը խմէին, հեգնական խօսքեր կ'ողղէին իմ
հասցէիս, ես տակաւին քիչ մը առաջուան
խորայոյդ տեսարանին տպաւորութեան տակ
կը գտնուէի և չէի կրնար վայրկեան մը
փարատել մտքէս անոր յիշատակը։ Վերջա-
պէս երբ տեսայ որ ամէնքն ալ բաւական
զուարթացած են և աւելի հետաքրքրուած
ինձմով, սկսայ մանրամասնաբար պատմել
նոյն իրիկուան դէպքը։ Ամէնէն աւելի կինս
յափշտակուած էր պատմութենէս և հպարտ
կը զգար ինքզինքը, ամէնքը յուզուած
մտիկ կ'ընէին։ Երբ աւարտեցի պատմու-
թիւնս, շնորհաւորութիւններ սկսան ամէն
կողմէ ինձ և կնոջս ուղղուած և շատեր
մօտենալով ձեռքս սեղմեցին։

«Այնուհետեւ ոչ ոք համարձակեցաւ օղի
կամ գինի առաջարկել ինձ. ամէնքը դո-
մնացին պատմութենէս։ Հետեւեալ իրիկունը
ընտանեօք մեր խոստացած այցելութիւնը
տօութիւնք նոր բարեկամիս տունը, անկարա-

գրելի ցնծութեամբ համակուեցան ամէնքը,
զուարթ և գոհ երեկոյթ մը անցուցինք.
կեանքիս մէջ այն իրիկուան չափ երջանիկ
վայրկեաններ ունեցած չէի։ Քանի մը օր
վերջն ալ բարեկամիս ընտանեկան փոխա-
դարձ այցելութիւնը վայելեցի։ անկէ ի վեր
մեր բարեկամութիւնը կը շարունակուի ան-
կեղծ և ջերմագին սիրոյ հաստատուն հիման
մը վրայ»։

* * *

Ծերունի բարեկամս այս պատմութիւնն
ընելէ յետոյ աւելցուց թէ — Մոլութիւննե-
րուն մէջ ամէնէն սոսկալին և վտանգաւորը
ալքոլամոլութիւնն է, որ կը տգեղցնէ և կը
ստորնացնէ հոգին և անոր հետ մարդկային
արժանապատուութիւնը, յոռի կիրքեր կ'ար-
թընցնէ և կը լիւսսէ քսակին՝ սպառելով
տարիներու ընթացքի մէջ քրտնաթոր և յոգ-
նատանջ աշխատութեամբ վաստկուած բա-
ւական կարեւոր գումար մը, անոր հետ
ոչնչացնելով նաեւ անոր ապագայ շահերը,
իսկ մարմինը կը մատնէ հիւանդութեանց,
կորսնցնել տալով անոր կորովն ու կենսական
ոյժը։

Երբ ալքոլամոլը՝ ընտանիքի մը հայրն ու
ղեկավարն ըլլալով արբելու ու թմրած վի-
ճակի մէջ կը գտնուի, ընտանեկան նաւը
ի՞նչպէս կրնայ ապահով և անվտանգ առաջ-
նորդուիլ կեանքի փոթորիկներուն մէջէն, և
այսպիսի հայր մը ի՞նչ աստիճան հայրական
հեղինակութիւն կրնայ պահել իր ընտանիքին՝
մանաւանդ զաւակներուն վրայ, և այս վեր-
ջիններն ի՞նչ աստիճան յարգանք, սէր և ան-
կեղծութիւն կրնան տածել այդ բարոյապէս
ինկած անարժան հօր մասին։

Արեւցող հօր մը այս բարոյական անկումն
ու վատթարագոյն վիճակը կ'ապացուցանէ
անտարակոյս թէ ալքոլամոլութիւնը անաւոր
և աւերիչ ոսոխ մըն է մարդկային կեան-
քին։ Անոր նիւթական լիւսմաները ոչ նուազ
ծանրակշիռ հանգամանք մը ունին ընտանե-
կան պէտքերու մատակարարութեան և խնա-
յութեան տեսակէտով։

Եթէ ալքոլի համար իւրաքանչիւր օր
մօլի եղող մը վատնէ առնուադն 60 փարա-

տարեկան 5 ոսկիի գումար մը մտնած պիտի ըլլայ, որ կրնար ընտանեկան անհրաժեշտ պէտքերու գործածուիլ: Ըսել է շատ մը հայրեր իրենց անձին և ընտանեաց անդամներուն զրկանք պատճառելով է որ գոհացում կուտան իրենց մոլեկան հաճոյքին: Հինգ ոսկիի գումարը 20 տարուան մէջ պիտի ընէր 100, և 9% տոկոսով բաղադրեալ գումարը գրեթէ 260 օսմ. ոսկիի պիտի հասնէր: Այսքան գումար մը կրնար համեստ դրամադուլիս մ'ըլլալ աւելցումովին՝ իրեն և զաւակաց ապագային համար: Ուրեմն տարիներու արդիւնք եղող այսպիսի հարստութիւն զոհել միմիայն անձնական շահոյքութիւնը վտանգելու, կեանքը կարճեցնելու և արժանիքն ու պատիւը ցեխին մէջ ձեռնելու համար, կատարեալ անմարտութիւն մը չէ՞ միթէ: Այս տխուր իրականութիւնը՝ որմէ ցնցուելու են աւելցումութեան ախտէն վարակուողները, անտեսագիտութեան դէմ կատարեալ մեղանջում և վրիպանք մըն է, զոր իր տարեկան ծախսոց և եկամուտին վրայ խորհող ու հաշիւ բռնող մը միայն կրնայ իրապէս ըմբռնել:

Եթէ նկատի առնուին ֆիզիքական աղէտներն ու վնասները զորս կը գործէ աւելցումութիւնն իր ենթակային կաղմութեան վրայ, այսինքն մարդուս ջղային դրութեան վրայ ունեցած քայքայիչ ներգործութիւնը, ուղեղին վրայ առաջ բերած խանգարումները, և կարգ մը հիւանդութեանց ժամանակ՝ Բագոսի երկրպագուներուն մահուան գիրքին ինչալը, և վերջապէս այն ժառանգական տխուր հետեւանքները՝ որոնք աւելցումովին զաւակներուն վրայ կը նշմարուին, ինչպէս են ապուրթիւն, յիմարութիւն, ջղային տկարութիւն և այլ բնածին թերութիւններ, որոնք անխուսափելի հետքերն են հայրական սոսկալի մոլութեան, աւելցումութեան աղէտը իր ահաբեկի մերկութեան մէջ կը ներկայանայ:

Եւ ամէնէն սոսկալին՝ արեւցութեան զոհ եղող հօր մը թողած դառն յիշատակն է:

— Մայրիկ, կ'ըսէր օր մը 7—8 տարեկան մանուկ մը, կը վախնամ, կը սոսկամ, երբ մայրը կը հրամայէր իրեն՝ փայտնոց երթալ և վառարանին համար քիչ մը փայտ բերել:

— Ինչո՞ւ, տղա՛ս, ի՞նչ կայ:

— Լաւն զի հայրիկին կօշիկները հոն են:

Հայրը՝ որ նշանաւոր խման մըն էր, մեռած էր 2 ամիսէ ի վեր, բայց խեղճ տղան տակաւին սոսկումով կը յիշէր այն անողորմ կիցերը զորս շատ անգամ կ'ընդունէր այն կօշիկներով, իր արքիւ հօրմէն: Այս մանրադէպը ցոյց կուտայ թէ ի՞նչ ցաւալի և տխուր տպաւորութիւններ կը թողուն աւելցումով հայրերու յիշատակներն իրենց զաւակներու մատաղ մտքերուն մէջ և մայրերու խոցոտած սիրտերը ի՞նչ խոր վէրքեր կը ներկայացնեն:

Այսքան մեծ և աղէտալի մոլութեան մը դարմանին համար բաւական չեն միայն լրագրական յօդուածները, եթէ իրենք աւելցումովները՝ չուզեն աղղուիլ իրենց անձին և ընտանիքին օգուտին համար մրցման բարի արդիւնքն եղող այսքան յուզիչ նկարագրութիւններէն, ճառերէն և քարոզներէն:

ՔԱՆԱՊՐԻՍ, որ երկրաշարժի հետեւանօք աւերակ դարձած է, պիտի օժտուի նոր քաղաքներով և տիպար բնակարաններով: Լրագիրներու եւ երկրաշարժէն աւերուած վայրերը տեսնող մարդոց կողմէ եղած նկարագրութեանց վրայ, հիւսիսային Խալիպա բնակող շատ մարդիկ պիտի այցելեն Քալապրիայի իրենց եղբայրներուն, վերահասու ըլլալու համար իրաց վիճակին: Հիմա ոչ միայն մրցում մը կայ անոնց օգնելու, այլ եւ ջանք կը տանին բարոյապէս ալ վերականգնել զանոնք: Լոմպարտացիներ, Բիէմոնթէյիներ եւ ձէնովացիներ կը խորհին թէ իրենց առաջին գործը պէտք է ըլլայ Քալապրիայի մէջ չինել արդի հանգստաւէտ պայմաններով օժտուած տուններ, հիւսիսակողմէն դաղթականներ զրկել՝ դէթ մասնակի մղում մը տալու համար մշակութեան գործին: Միւլանցիները ալ աւելի առաջ կ'երթան: Քաղաքի մը շինութեան ձեռնարկել կ'ուզեն, որ ունենայ մինչեւ քսան մէթր լայն փողոցներ, մէյմէկ պարտէզ, փուռ եւ հարկ եղած անհրաժեշտ բաները: Բայց այդ նորաչէն քաղաքը մասնախուժքի մը կողմէ պիտի յանձնաձուլի եւ կալուածատէր չպիտի ունենայ: Անունը պիտի դրուի Նուօվա—Մարթիբանօ:

ԷՕԺԵՆ ՖՐՈՍԱՆԹԵՆ

Ֆրանսացիք այս վերջերս արձանով մը յաւերժացուցին Էօժէն Ֆրոմանթէնի յիշատակը։ Այս անունը անձանօթ է մեզի, և սակայն մեծ նկարիչ մը և մեծ ալ գրագէտ մը եղած է Ֆրոմանթէն, մեծ անո՛ր համար մանաւանդ որ կրցած է ինքզինքը զերծ պահել իր ժամանակին բոլոր իմացական նախապաշարումներէն և աւանդութիւններէն, ու կերպով մը նախակարապետը եղած է իմացական ուրիշ աւելի առողջ ուղղութեան մը որ մէկ երկու տասնեակ տարիներէ վերջ՝ Ֆրանսական արուեստին ու գրականութեան մէջ տիրապետող դիրք մը պիտի գրաւէր։

Իբր նկարիչ՝ Ֆրոմանթէն շատ գլուխգործոցներ թողած է, մասնաւորաբար ալ՝ ճերիական տիպարներու շարք մը զորս եւրոպական թանգարաններ ձեռքէ ձեռք կը խլեն միշտ։ Իսկ իբր գրագէտ՝ հազիւ չորս գիրք, երկու ճամբորդութեան նկարագրութիւններ, վէպ մը և քննադատութեանց շարք մը, որոնք սակայն պիտի բաւէին իրեն անուն մը ապահովելու, նոյն իսկ եթէ իր նկարչական գործը գոյութիւն չունենար։

Բայց որպէս զի այդ հասկացողութիւնը զոյանար և իր գործը իր իսկական արժէքին համապատասխանող հիացման մը առարկայ դառնար, պէտք էր որ ժամանակները փոխուէին, և անոր հետ ալ չըլուէին նաև այն իմացական ըմբռնումները որոնց դէմ ընդվզելով միայն գրած էր։ Քառասուն տարի առաջ, ոօմանթիք գրականութեան ամէնէն ծաղկած ատենները՝ Ֆրոմանթէնի գործերը մէյ մէկ արատներ էին, և կամ աւելի ճիշդը մէյ մէկ անհարազատ զաւակներն էին Ֆրանսական մտքին, և հետեւաբար՝ միայն արհամարհանք ցոյց կը տրուէր անոնց մասին։ Անոնք լքուած էին խորթ զաւակներու պէս, և այդ անհարազատութիւնը այն աստիճան անհաճոյ կը թուէր ժամանակին մարդոց, որ նոյն իսկ չէին ուզեր նկատի առնել գե-

ղեցկութիւնն ու հրապոյրները այն գործերուն՝ զորս իրենց գործովէն կը զրկէին։

Նոյն բանը նաև գեղարուեստի մէջ։ Ինչպէս որ իր գրական գործերը կ'արհամարհուէին ու կը լքուէին, այնպէս ալ իր նկարները միայն խճճուելու համար կը յիշատակուէին։ Եւ ուրիշ մեծութիւն մը այս մարդուն քով՝ սա եղած է որ հակառակ այդ արհամարհանքին ու խճճանքներուն, անվնաս կ'որոպով մը շարունակած է իր գործը, երբեք չէ ընկրկած այն խաղաղ բայց յամառ պայքարին մէջ՝ զոր կը մղէր իր ժամանակուան գրական ու գեղարուեստական ըմբռնումներուն դէմ։ Կարծես վստահ ապագայ սերունդներու գնահատութեան մասին, անիկա իր կարգին արհամարհած է կենդանութեանը միջոցին ստացուելիք ամէն դափնի, ամէն փառք ու մեծութիւն, եւ անվկանդ յարատեւութեամբ մը միշտ իր իտէալը հետապնդած է։ Ու չէ սխալած։ Ինչ որ երբեմն իր լքուելուն պատճառ կը դառնար՝ այսօրուան Ֆրանսացւոց աչքին իր փառքը կը կազմէ։

* *

Ըսինք արդէն թէ Ֆրոմանթէն կը գրէր ոօմանթիք գրականութեան ամէնէն ծաղկած շրջանին, անանկ ատեն մը ուր Ֆրանսական իմացականութիւնը ամբողջովին պատուաստուած էր ոօմանթիզմի ըմբռնումներով։ Արդ, ոօմանթիզմը ունեցած է իր առաւելութիւններն ու բարիքները, բայց միշտ հեռու մնացած է իրականութենէն։ Իր նկարագրած տիպարները մտացածին էակներ են, իր ցուցադրած պատկերները անգոյ, իր պարզած բարքերը երեւակայական։ Ուրիշ կերպ ըսելով, անիկա աւելի երեւակայութիւնը իրեն հիմ ունեցած է քան զիսողութիւնը։

Ֆրոմանթէն ճիշդ հակառակ ուղղութիւն մը բռնած է. փոխանակ թոյլ տալու որ իր միտքը երեւակայութեան գերի դառնայ, զայն ենթարկած է իր զգայարաններուն եւ մասնաւորաբար իր աչքին, եւ ատոր շնորհիւ կրցած է արտադրել ճշմարտապէս զգացուած

ու հարազատ գործեր: Իր ճամբորդութեան հատորները նկարագրութեան գլուխ—գործոցներ են. ոչ թէ միայն իրենց ու մարդիկը ներկայացուցած է այնպէս՝ ինչպէս որ են իսկապէս, այլ նաեւ անոնց ներքին էութեան, անոնց հոգւոյն թափանցած է, եւ կրցած է զանոնք պատկերացնել իր զգայարանքներուն թելադրութեանց համաձայն: Այդ յատկութիւնը միեւնոյնը մնացած է նաեւ իր վէպին եւ քննադատութեանց մէջ:

Ինչպէս կը տեսնուի՝ Ռոմանթէն կանխած է իր ժամանակը: Մէկ երկու տասնեակ տարիներ վերջ մարմին առնող եւ յաջորդաբար իրար կործանող գրական ըմբռնումները, — ինչպէս բնապաշտ, հոգեբանական ու սոսկաւորական դպրոցներու վարդապետութիւնները, — խտացած են իր գործերուն մէջ: Ինք ճամբան բացած է եւ անկէ քալած է առանց դաւանութիւններ կազմելու, առանց կանոններ սահմանելու, եւ թերեւս ասոր համար է որ իր անունը երբեք չի յիշատակուիր, ամէն անգամ որ այդ դպրոցներէն մէկուն կամ միւսին ծագումը կը փնտռուի:

Իմացական ըմբռնումները, որչափ ալ արտակարգ երեւան՝ նոր բաներ չեն: Մարդկութեան ամէն շրջաններուն մէջ կրնան գոյութիւն ունեցած ըլլալ ռոմանթիք, բնապաշտ, սոսկաւորական ու սէնսուիսթ գրողներ, ինչ որ կ'ենթադրէ թէ արդի ժամանակներու ըմբռնումներուն արդիւնքը նկատուող այդ իմացական ուղղութիւնները նոր մտածուած, նոր ձուլուած չեն: Եթէ անոնք առանձին դպրոցի հանգամանքը ստացեր են, եւ որոշ ժամանակաշրջաններ բռներ են մարդկային իմացականութեան պատմութեան մէջ, պատճառը սա է որ հանճարեղ ու ազդեցիկ միտք մը իր տաղանդը նուիրեր է այդ ուղղութիւններէն մէկուն կամ միւսին, օրէնքներ ու կանոններ սահմաներ է անոր համար, եւ յաջողեր է իրեն ժամանակակից մտքերու հարկեցուցիչ դարձնել այդ ուղղութիւնը, իր սահմանած օրէնքներով ու կանոններով:

Ռոմանթիք գրողներ կային չափ դարեր

առաջ, բայց ռոմանթիզմը դրելու կերպ մըն էր միայն, սոսկ ուղղութիւն մը: Հիւսօ մը պէտք եղաւ որպէս զի դարեր վերջ իր հանճարեղ միտքը անոր նուիրէ, անոր կանոնները սահմանէ, ռոմանթիզմի օրէնքներ հաստատէ («Բրոմուէլ») յառաջաբանին մէջ) և իր ատենուան մտքերը յանկուցանելով՝ դանոնք այդ ուղղութեամբ արտադրելու մղէ: Եւ ահա՝ միեւնոյն իտէալին ձգտող, ու այդ իտէալին հասնելու համար միեւնոյն միջոցներն ու եղանակը կիրարկող մտքերու այդ խմբակցութենէն է որ գրական կամ գեղարուեստական Դպրոց մը կը կազմուի:

* *

Ռոմանթէն՝ այդպէս իր ժամանակակիցները յանկուցանելու, և տիրող գրական ուղղութեան մը տեղ ուրիշ ուղղութիւն մը հաստատելու չափ հանճար չունէր: Ռոմանթիզմը քանի հեռացած էր իրականութենէն, քանի դադրած էր մարդկային ըլլալէ, ինք ալ ա՛յնքան պէտք տեսած էր դէպ ի իրականութիւն դիմելու:

Ռոմանթիք գրողները չափ պատուական իտէալներ կը պարզէին մարդկային մտքին, բայց ո՛չ թէ միայն իրենց ցոյց տուած իտէալները ընդհանրապէս անհասանելի էին, այլ նաեւ անոնց հասկացողութեան նպաստելու համար ցուցադրուած օրինակները իրական կեանքի հետ չափ մեծ կապ մը չունէին: Հէքեթաթունակ առաքինութեանց և անհնարին մոլութեանց ու ապականութեանց մարմնացումները այնքան չեն ազդեր մարդկային մտքին վրայ, որքան բուն իսկ իրական կեանքէ առնուած առաքինութեան ու մոլութեան մարմնացումներ: Որովհետեւ ժողովուրդին աչքին՝ այս վերջինները աւելի կենդանի են, աւելի խօսուել, աւելի արտայայտիչ: Անիկա շարունակ առիթը կ'ունենայ այդ տիպարներուն համապատասխանող անհերոս հանդիպելու, անոնց հետ ապրելու, անոնց հետ խօսելու: Հետեւաբար՝ աւելի լաւ և աւելի դրական կերպով մը կ'ըմբռնէ բոլոր այն իտէալները՝ որոնց հասկացողութեան համար՝ գրող մը այդ կարգի տիպարներ կ'ընտրէ իբր օրինակ:

Այդ նպատակը կը հետապնդէր Ֆրոման-
թէն: Կ'ուզէր աւելի ճշմարիտ, աւելի կեն-
սունակ հանգամանք մը տալ գրականութեան
ու նկարչութեան, որպէս զի աւելի բարեբար
աղբեցութիւն մը գործեն անոնք մարդկային
հոգւոյն վրայ:

Բայց ուսմանթիւմի համատարած և ամ-
րակուռ աղբեցութիւնը խորտակելու համար
ո'չ բաւարար տաղանդ, ոչ ալ զօրութիւն
ունէր: Ինչ որ իրմէ վերջ Ջօլա կրցաւ ընել
այնքան դիւրութեամբ՝ իր գործը չէր: Մարդ-
կային հոգւոյն կատարելութեան համար:

Կ'ուզէր աւելի անհրաժեշտ դարձնել դէպի
իրականութիւն հակում մը, բայց այդ գա-
ղափարը հարկեցուցիչ դարձնելէ առաջ
պէտք էր նախապէս տապալել ուսմանթիւմը:
Եւ ինք այդ կարողութիւնը չունէր: Ջօլայի
ամենի, յաճախ կոպիտ և միշտ անվկանդ
կամքն ու զօրութիւնը պէտք էին այդ հե-
րակեան աշխատութիւնը գլուխ հանելու
համար:

ԱՐԱՄ ԱՆՏՈՆԵԱՆ

(Սուրհանդակ)

ԵԿՈՒՐ ԱՂԵՈՐԾ

(Ս Ի Ր Ե Ր Գ)

Անտառակին ճամբուն վրան,
Կուղե՞ս աղւորըս ճեմենք հեղ.
Սէրըս պատուոյդ չէ՞ պահապան,
Միայնութիւնն ի՞նչ փոյթ մեզ:

Պայծառ լուսնին քով սիրակէզ,
Ամպիկները տե՛ս փայլուն,
Անոնք ալ մեզ պէս չե՛ն կարծես,
Յար ուղեւոր սէր-ճամբուն:

Անոնք երկնի լուրթին ներքեւ,
Կանաչի մէջ մենք ալ հոս՝
Ջունի՛նք ամէնքս ալ ակներեւ,
Կեանքի նո՛յն ակը մշտահոս:


Կանաչներու մէջ մենք ալ հոս,
Բռնենք վըկայ մեր սիրոյն,
Ծաղիկներն այս՝ թէ և անխօս՝
Բայց իրենք ալ սիրամոյն:

Եւ գէթ ը՞սենք մանուշակին
Մենք ալ քեզ պէս խոնարհ ենք,
Դուրս տալու մեր բուրմունք սրտին՝
Միայնութեան կարօտ ենք:

Անտառակին ճամբուն վրան,
Եկո՛ւր աղւորըս ճեմենք հեղ,
Սէրըս պատուոյդ չէ՞ պահապան,
Միայնութիւնն ի՞նչ փոյթ մեզ:

ՄԱՅՔԷՈՍ Ֆ. ԷՊԼԻՂԱՔԵԱՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՐՁԱԳԱՆԳ



Բարիդի Գոնդուառ տ'Էսքոնդ դրամա-տունէն, կեղծ նամակներու և կեղծ չէքերու միջոցաւ, մէկ միլիոն ֆրանքի չափ գումար մը իւրացնող ու միտող երիտասարդ գրա-գիրը, Կալլէ, — որուն արկածախնդրութիւն-ները պատմած ենք ժամանակին, — Պրազիլիոյ իշխանութեանց կողմէ ֆրանսական ոստի-կանութեան ներկայացուցիչներուն յանձ-նուած ըլլալով, նախորդ շարթուն Բարիդ բերուեցաւ իր հոմանունին՝ Տիկին Մէնէլլի ու այս վերջնոյն սենեկապանուհիին՝ Մառի Օտօի հետ։ Երեքը մեկանց կը հարցաքննուին այս միջոցին։

Այս հարցաքննութիւնները, որոնք երկար սիւշակներ կը գրաւեն բարիդեան թերթե-րուն մէջ, նոր ու շահեկան յայտնութիւն մը երեւան չեն բերեր, յայտնի ըլլալով արդէն Կալլէի խորհրդախօսութեանց եղանակը զոր ինք իր բերնով կը խոստովանի այժմ։ Իսկ Տիկին Մէնէլլի կը յամառի ըսել թէ ինք այդ երի-տասարդը ճանչցած է «Պառոն տը Կուսվալ» անունով, իբրեւ ճշմարտապէս հարուստ մէկը որուն սիրահարուած էր. ու կ'աւելցնէ թէ մինչև հիմայ կը պահէ նոյն սէրը անոր վրայ։ Սենեկապանուհիին դերը երկրորդական է. տեսակ մը գողոնաթաքոյցի դեր, վասն զի Քաթարինա զօրասնաւը, որով ճամբորդած էին կեղծ Պառոնը ու իր հոմանունին, Պա-հի-ի նաւահանգիստը հասնելուն, երբ փա-խստականները ձերբակալուեցան՝ անոնց գոյքերն ալ գրաւուելով, Մառի Օտօի քո-վէն գտնուեցաւ 850,000 ֆրանքի չափ պանքտոմս, զոր Կալլէ իրեն տուած էր պա-հելու համար։

Բարիդեան թերթերը այնքան հետաքրք-րութեամբ կը հետեւին այս երեք բաղդա-խնդիրներուն ամէն մէկ արարքին, որ անոնց պատկերները ու կենսագրական մանրամաս-նութիւններ հրատարակելէ զատ, Ժուլուալ լրագիրը անոնց ետեւէն մինչև Պրազիլիա յատկապէս թղթակից մը ղրկած էր, որ զա-նոնք բերող Քոնսթանտնուպոլ վերա-

դարձած է ու Պահիաի մէջ իր տեսածներն ու լսածները կը պատմէ հիմակ յօդուածնե-րու շարքով մը։

Առաջին հարցաքննութիւններէն երեւան եկած է սա պարագան, թէ Կալլէ մեղսակից մըն ալ ունի, որուն ո'վ ըլլալը և ո'ւր գտնուիլը չի գիտցուիր տակաւին։ Հարցա-քննութիւնը այս կէտն ալ պիտի լուսաբանէ։

Կալլէի օրինաւոր կիներ, — վասն զի Գոն-դուառ տ'Էսքոնդի դրամները շորթող երի-տասարդը ամուսնացած է, ու երկու զաւ-կներու տէր, զորս երեսի վրայ թողուց ու փախաւ, — հարցաքննիչ դատաւորին արտօ-նութեամբ՝ բանտ երթալով, տեսակցեցաւ իր ամուսնին հետ, վշտահար և յուզեալ շեշտերով, բայց կնոջական գթօտ ու կարե-կից երեւոյթով մը։




Պրազիլիոյ Խորհրդարանին մէջ երեսու-խան մը՝ Պ. Մէտէվիոս Ապուքէրք՝ տասը միլիոն ֆրանքի մրցանակ մը քուէարկել տուաւ, որ առանց ազգի խտրութեան պիտի տրուի անոր որ կանխարգել միջոց մը կամ ազդեցիկ դարման մը գտնէ՝ ուսկանախտին, խլիրդին և ուրիշ տարափոխիկ հիւանդու-թեանց դէմ։

ԱՊԱՀՈՎԱԴՐԱԿԱՆ զանազան ընկերու-թեանց ընդհ. գործակալ Գառնիկ էֆ. Աստ-ուածատուր, որ Եւրոպա գացած էր ներկայ գտնուելու Համպուրկ—Միւնիխ ընկերու-թեան հաստատման քսանհինգամեակին, իբր նախկին աշխատաւոր մը այդ ընկերու-թեան որուն գործառնութեանց ընդարձակ-ման նպաստած էր ի Թուրքիա, մայրաքա-ղաքս վերադարձած է։ Գ. Աստուածատուր էֆ. օգտուելով իր ուղեւորութիւնէն, ստանձ-նած է Տնօրէնութիւնը գերմանական երկու նոր և կարեւոր ապահովագր. ընկերութեանց որոնք պիտի գործակցին Ֆրանքֆորթուազ ծովային ապահովագրական ծանօթ ընկերու-թեան հետ որուն գործակալութիւնը քսան տարի է ի վեր ձեռնհասօրէն և ուղղամտօրէն կը վարէ այստեղ Գ. Աստուածատուր էֆ.։



ԱՆՎՃԱՐ ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆԵՐ



(ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ)

Մասիսի միջոցաւ քանիցս մեր գաւառային բաժանորդներուն ուղղած հրապարակային հրաւերնիս՝ իրենց անվճար բաժանորդագիրներուն առաքմանը համար, շատ քիչ արդիւնք տուած ըլլալով մինչև ցարդ, հարկադրուած ենք անգամ մըն ալ կրկնել, և ստիպողաբար:

Ներկայ տարեւրջանի յորդ ամիսը լրացաւ արդէն, 31 թիւերու հրատարակութեամբ, և կը մնայ միայն 5 ամիս կամ 21 թիւ, որպէս զի լրացնենք Մասիսի վեցերորդ տարին՝ իր արդի գրական շաբաթաթերթի ձեւին տակ՝ թեւակոխելու համար եօթներորդը: Եթէ պատահի որ տարուան մէջ մէկ կամ երկու անգամ թերթը չի հրատարակուի բացառիկ պատճառով մը, — ինչպէս պատահեցաւ նախընթաց շաբթուն, — առկէ որ և է վնաս առաջ չի գար բաժանորդներուն համար որոնք իրենց տարեվճարին փոխարէն 52 թերթ ստանալու իրաւունք ունին միշտ:

Այս հակիրճ բացատրութիւնը տալէ ետքը, պէտք չենք տեսներ աւելցնելու թէ ոչ ոք թերթ կը ստանայ առանց իր ուղեւորուն և երբ թերթի մը վարչութիւնը՝ բաժանորդի մը մէկ երկտող յանձնարարութեանը վստահելով՝ եօթը ամիս շարունակ թերթ կը ղրկէ անոր, առանց բաժանորդագրի խօսք ընելու, — լրագրութիւնը չի նկատելով իբրեւ խանութպանութիւն մը ու առուտուր մը, այլ իբր մտաւորական աշխատութիւն մը և գրական գործ մը որուն նիւթական պայմանները բոլորովին տարբեր են ու շատ թեթեւ, — փոխադարձաբար իրաւունք ունի սպասելու որ բաժանորդները փափկանկատութիւնն ու ազնուութիւնը ունենան իրենց տարեվճարը ղրկելու, գէթ այսքան երկար յապաղումէ մը ետքը:

Մասիսի տարեկան բաժանորդագիրը այնքան համեստ գումար մը կը կազմէ, — 50 զրշ, միայն՝ 52 թերթի փոխարէն, բոս-

թայի ծախքն ալ խմբագրութեանս վրայ ըլլալով, — որ չպիտի արժէր այսքան ծանրանալ անվճար բաժանորդագրութեանց վըրայ, եթէ յայտնի իրողութիւն մը չըլլար թէ, այդ փոքրիկ գումարներուն ամբողջութիւնը մեծկակ գումար մը կը կազմէ որ իր կենսական նշանակութիւնը ունի թերթիս մատակարարութեանը վրայ, ինչ որ մեր հեռաքնակ բաժանորդներուն բարեացակամ ու շարժութեանը կը յանձնենք:

Յուսալով որ մեր այս հրաւերը իր արդիւնքը կ'ունենայ, մասնաւորապէս կը խնդրենք իզմիրի, Նիկոմիդիոյ, Սամսոնի, Տրապիզոնի, Ատանայի, Հալէպի, Սըվադի, Էրզրումի և ուրիշ գաւառային քաղաքներու մեր բաժանորդներէն որ հաճին՝ գործակալ գտնուած տեղերուն մէջ այս վերջինին յանձնել իրենց բաժանորդագիրը, իսկ գործակալ չգտնուած տեղերու բաժանորդներէն՝ որ մանտա-բօսթով ուղղակի խմբագրութեանս հասցնեն ընթացիկ տարեւրջանի իրենց բաժանորդագիրը, 50 զրշ.:



Ստացանք Հ. և Զ. Ասատուրի դասական մէկ նոր հրատարակութիւնը, ԹԱՆԳԱՐԱՆ հասընթիւ հասուածներու արձակ եւ ոսանաւոր (Միջին Դասընթացք). — պատկերազարդ հատոր մը, Յ. Մաթթէոսեան խնամեալ տպագրութեամբ ի լոյս ընծայուած: Կը պարունակէ հրահանգիչ հատուածներ, բարոյական, իրագիտական, նկարագրական, բանաստեղծական և այլն, մեծագոյն մասը թարգմանութիւն ծանօթ հեղինակներէ: Միջին Դասընթացքի աշակերտներու և աշակերտուհիներու վերձանութեան յատուկ հատոր մըն է, մաքուր աշխարհաբարով և խնամու ընտրութեամբ պատրաստուած: Վաճառման կեդրոնատեղին՝ Պ. Պալենց Դըրատունը: — Դին 6 զրշ.:

Հիմնադիր — Կ. Ս. ԻԻԹԻԺԵԱՆ

Տէր եւ ՏՏօրէն — ՏՌԲԹ. ԵԴՈՒԱՐԴ ՄԱՍԻՍ

Տպագրութիւն ԵՐԵՒԱՆԻ Օրագրի

CAISSE PATERNELLE

ՔԷՍ ԲԱԳԵՌՆԵԼ

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ

ՀԻՄՆԵԱԼ Ի ԲԱՐԻՉ 1841 ԻՆ

ԿԸ ԳՈՐԾԷ ՅՐԱՆՍ. ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՀՈԿՈՂՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱԿԱԿՇՈՒՆ ՏԱԿ

Սկիզբէն ի վեր ապահովագրեալներու եղած վնարում 300 միլիոն մը.

Սկիզբէն ի վեր արձանագրեալ ապահովագրութիւնք 700 միլիոն մը.

ԸՆԹԱՑԻԿ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՔ ՅՐ. 85,000,000

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ ԵՒ ՊԱՆԵՍՏ 62,750,000

Ուրեմն ընթացիկ ապահովագրութեանց դաւարին վրայ պահեալի համեմատութիւնն է 74% . որով ՔԷՍ ԲԱԳԵՐՆԵԼԻ ընծայած երաշխաւորութիւնը գեր ի վեր կը հանդիսանայ ուրիշ ընկերութեանց ցոյց տալով երաշխաւորութիւնէն:

Ընկերութեան վարչական Խորհուրդը կազմուած է Յրամասար մէկէն նշանուոր դրամատէրներէն, ինչպէս

Մ. ՌԸՆԷ ՊՐԻՍ, Արեւմտեան Յրամասար երկաթուղեաց ընկերութեան եւ Քրէտի Լիոնէի վարչական Խորհրդոյ անդամ.

Մ. ՄԱՐԲԻ ՏԸ ՖԼԷՌ, Դրամադրանդիք ընկերութեան վարչական Խորհրդոյ անդամ.

Մ. ԿՈՄՍ ՏԸ ՍԵՆ ԿԻԼԷՄ, նաեւ ինքն գանձ պահ.

Մ. Օ. ՄԱԶԸՐԱ, Ընդհ. Տնօրէն Քրէտի Լիոնէի.

Թաւրջոյ Տնօրէն Պ. ԱՍՏՈՒԱՍԱՏՈՒՔ

Պալիս, Սաւթան-Համամ, Բասաժ Բաթըրճըզլու

Ընկերութեան վստահեցուցիչներն առնելու համար դիմելու Քրէտի Լիոնէի.

ԾԱՆՈԹ. — Ծանաւոր դիրք պիտի տրուի այն անհատին որ կ'աւելուր արդիւնք մը ի ազորմամբ ըլլալ անճնապէս:

1—10

Ա.ԴԱՄ ՎԱՐԴԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Ամէն տեսակ քօհաֆիյի ապրանց

Մեծ-Շուկայ, Քիւրքէիներու դրան կից, Թ. 41—43

Նայնպէս, արանց եւ կանանց հաշտեցուոր հովանոցներու վաճառատուն, Պալիս, Սաւթան-Համամ, Միտիլի Դրամատան դէմ Թիւ 58:

Սոյն երկու վաճառատուններուն մէջ գտնուած ապրանքները, թէ՛ քօհաֆիյի վերաբերեալ եւ թէ՛ արանց եւ կանանց յառուկ հովանոցներ, իրենց գեղեցկութեան կը միացնեն ապակեւորութիւն, եւ դիւրամատ չիլի գինեւոր առուելութիւնն ալ կ'ընծայեն հաւորակութեան:

Ադամ վարդեան մեծապէս զանազան տեսակի լաթերէ յաւաքարէները:

պէտք է որ Շուկայ կլաղ մէկն ընտանիք այցելէ անգամ մը այս երկու վաճառատունները՝ եղանակին պէտքերը հաշտուլու համար:

1—10

ՏՕՔԹ. Ե. ՄԱՍԻՍ

ԲԵՐԱ ԹԱԳՍԻՄ ՓՈՂՈՑ ԹԻԻ 12

Ամէն տեսակ ներքին հիւանդութիւններէ զատ, մասնագիտաբար եւ երկար տարիներէ ի վեր կը դարձնէ սաւաքօր, աղեաց, միզային ճանքաներու հիւանդութիւնները, ջրային տկարութիւնները, հին եւ նոր դաշտկան տխտերը, Այս վերջին տխտերը՝ առանց սաւաքօր խանգարման եւ նորագոյն մեթոտներով կը բուժէ կարճ միջոցի մէջ:

Հիւանդ կընդունի մէկն օր կէս օրէ վերջը, Զօրեքարճի օրերը միայն ճիշդ: 1—10

ԱՌԻԹԵՆ ՕԳՈՒՏ ՔԱՂԵԼՈՒԹՅՈՒՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՍԵՂ ՅԱՐԱՊԵՍԻՈՆԱՐԱՍ ԿԳՐԱՍԻՈՆԱՐԱՍ

ՀԷՐԻՃ Ա. ՅԻՍԵՄՅԱՆ



ԱՊԱՌԻԿ ԵՒ ԿԱՆԽԻԿ ՎԱՃԱՌՈՒՄ

Գոհաբեղեցնելու, ամեն անգամ կամ կարասիներու եւ ամենեւնի նահապետներու, եւլն.

Պատիւ ունինք ծանուցանել պատուարժան հասարակութեան թէ՛ մեր վաճառատանը փորձներուն անհաղթելիք աւելի ճշմարտեմբար. ու մեր յարգելի յաճախորդաց աւելի գոհացում տալու նպատակով, ՈՍԿԵՐԶՈՒԹԵԱՆ վերաբերեալ ամէն տեսակ ապրանքներէ քառ. կրնորաւ եւ այրերաւ համար՝ եւ միշտ ու փոքր ամէն տարիքի յառաւի ԶԳԵՍՏԵՂԵՆՆԵՐՈՒ, ճերմակեղէններաւ եւ (թօնաֆի) ու միանգամայն ամէն տեսակ առջնակարգ ԿԱՐԱՍԻՆԵՐՈՒ (ձեղունի լամպեր, աֆրիկեանք եւ այլն.) ճոխ մթերանոց մը հաստատած ենք. խիստ դիւրամատչելի գիններով, եւ կանխիկ ու ապուրիկ պայմաններով:

Արդ՝ կը հրաւիրենք մեր համակրելի յաճախորդները, որ հաճին դիմել վերաբերեալ վաճառատները, ուրկէ անտարակոյս անհուն գոհաբեղեցնեամբ պիտի մեկնին:

ՎՃԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Ապուրիկ գնողներաւ համար հարիւրին 20 կանխիկ եւ մնացեալ գումարին հարիւրին 5 շաբաթական վճարմամբ:
2. Կանխիկ գնողներաւ համար հարիւրին 5 զեղչ:
3. Կանխիկ ծախուած ապրանքներէն միմիայն աղամանդեալ գոհաբեղեցնելու կըրք գործածուած ըստ անշիւնս մնացած ըլլած՝ հարիւրին 10 զեղչով եւս կառնուին: Իսկ ապուրիկ ծախուած եւ անշիւնս մնացած միմիայն աղամանդեալ գոհաբեղեցնելու ալ հարիւրին 15 զեղչով եւս կառնուին:

ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

Յ. Գ. Շարանական վճարմանց հաճար հաւարիչներ ընդմիջող պատրաստ են:

ՄԵՏ ՇՈՒԿԱՅ ՈՍԿԵՐԶՈՅ ՓՈՂՈՅ, ԹԻՒ 13 Կ. ՊՈԼԻՍ



ՌՕՍԻԱ - ROSSIA

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ



ՀՐԻՆԷ, ԿԵԱՆՔԻ, ՓՈԽԱԳՐՈՒԹԻՒՆՔ ԱՐԿԱՍԻ

1881 մարտ 20ի Կայս. Ուքազով արտոնուած

Կեդրոնատեղին Բեդերսպոլսկ, իրեն յատուկ չէնք:

Ընկերութիւնը խիստ նպաստաւոր քաղ մասններով ապահովագրութեան կ'ընդունի ԿԵԱՆՔԻ վրայ, եւ ՀՐԻՆԷ, ՓՈԽԱԳՐՈՒԹԵԱՆ ՎՏԱԳՆԵՐՈՒ, ՍՄԻՆ ՏԵՍԱԿ ԱՐԿԱՍՆԵՐՈՒ ԴԷՄ, ցկեանս ապահովագրութիւն ՇՈՒԿԱՍԻՈՆԱՐԱՍ ԵՒ ՇՈՒԿԱՍԻՈՆԱՐԱՍ ԱՐԿԱՍՆԵՐՈՒՆ ԴԷՄ, ինչպէս նաեւ ՀԱՅԵԼԻՆԵՐՈՒ ԵՒ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ Կառնաբեղուն դէմ:

Ընկերութեան դրամագլուխը, ամբողջապէս վճարուած

10,666,666 Ֆրանք

Երաշխաւորութեան գումար աւելի քան

149,852,000 »

Ընկերութեան ապահովագրողներուն վճարուած դրամա-

355,840,000 »

գլուխ եւ վնասուած հատուցում

1903 տարւոյ մէջ դանձուած ապահովագրին եւ տուրո

64,553,800 »

Ամէն տեսակ տեղեկութեանց համար դիմել Կ. Պոլսոյ մասնաճիւղին, Ազգային խան, Վոյվոսա, Դաւաթիւս:

5-10

Ի Ի Ն Ի Օ Ն

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆՍՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԿԱՆ ԸՆԿ

ՀԱՍՏԱՏԵՍԼ Ի ԲԱՐԻՉ 1828-1829

Հ Բ Գ Ե Հ Ի Ճ Ի Ի Ղ

Մինչև 1902ի վերջը հատուցեալ վնասք	274,000,000	Քր.
1902ին գանձուած ապահովագին	24,000,000	»
Դրամագլուխ երաշխաւորեալ	119,000,000	»
Ապահովագրեալ դրամագլուխ	21,500,000,000	»

Կ Ե Ն Ս Ց Ճ Ի Ի Ղ

Մինչև 1902ի վերջը հատուցեալ վնասք	129,000,000	Քր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	272,000,000	»
Դրամագլուխ եւ պահեստք	158,000,000	»
1092ին գանձուած ապահովագին	12,000,000	»

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Իւնիոն»ի ապահովագրելոց կ'ընծայեն հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ԶԷ ԴՏՆԵԼ ԱՐԵՒԵԼԻՔԻ ՄԷՉ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՔՈՎ:

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց՝ գեղջեալ գինեւոյ: Նպաստաւոր պայաններ անհամեմատ կերպով աւելի գերազանց քան ուրիշ որ եւ է ընկերութեան մայմանները: Շահաբաժիններու տարուէ տարի անմիջական վճարում, որով Իւնիոն/ ապահովագրուողք ԶԵՐԾ են այն վնասներէն եւ յուսաբարութիւններէն, որան կենթարկուին միշտ այն անձինք, որ ջանաբաժիններու բարդման (accumulation des bénéfices) ՅՈՒՒԻ եւ ՎՆԱՍԱԿԱՐ դրութեամբ գործող ընկերութեանց կ'ապա հովագրուին:

Ընկերութեան դրամաւորներն եւ ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆՔԱՆ Թուրքիոյ եւ Արեւելի Տնօրէնութիւն

Պոլիս, Սուլթան Համաժ, Բասաժ Բաքըրք Օղլու

Մասնաճիւղ Ղալաթիա, Լոնայէթ Խան:—Գործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր քաղաքաց մէջ

2-10

ՖԵՆՏԻՔՍ ՕԹՐԻՇԻԷՆ

ԿԱՅՍ. ԹԱԳ. ՍՈՍՆԶՆԱՇՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐ. ԸՆԿ.

Հրդեհի եւ կեանքի (ի վիէննա)

ՊԱՅՈՒՍԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ն. Ա. Բ.

ԴՈՒՔՍ ԼՈՒՒՍԵ ՊԱՎԻԵՐ

ԼԱ ԷՍԹՐԷՅԵԱ

Ապահովագր. Ընկ. ընդգեմ հրդեհի եւ ծովային ահապանքներու (ի ՄԱՏՐԻՏ)

Ապահովագրութիւնք կ'առաւարտին լաւագոյն պայմաններով:

Սոյն ընկերութեանց Դրամաւորներն է Ի. Գ. Պոլիս, Բուէի Լիօն

Ընդհ. եւ լիազոր ներկայացուցիչ Թուրքիոյ

Գ. ՅԵՐԱՅԵԱՆ

Գրասենեակ, Պոլիս, Ալեքսան Խան,

2-10

PHOENIX ASSURANCE L Co.

“ՖԻՆԻՔՍ”



ՀԻՄՆԵՍԱԼ Ի ԼՈՆԾՈՆ 1782 ԻՆ
ԿԸ ԳՈՐԾԻ Ի ՊՈԼԻՍ 1869ԻՆ Ի ՎԵՐ
ԱՆԳԼ. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ.
Իրամագլուխ եւ պահեստի դրամ

• ԱճՂ. ոսկի 4,218,000

ՖԻՆԻՔՍ ոսկի հրդեհի դէմ Ապահ-
վաւորութեան Ընկերութիւն մըն է, ծանօթ
իւր պատուաւորութեամբ եւ փութութեամբ մէջ
իւր անմիջական վճարումներով:

ՖԻՆԻՔՍ կ'ապահովագրէ հրդեհի եւ
կայծակի դէմ մէկն առաւել անշարժ եւ
շարժուն ստացուածք, յայտնաբերուած
պայմաններով:

Ընկերութեան նշանաբանն եղած է.
ՈՒՂԱՄՏՈՒԹԻՒՆ Եւ ԱՆՄԻՋԱԿԱՆ
ՀԱՏՈՒՑՈՒՄՆ ՎՆԱՍՈՒՑ, ՑՈՐԴ՝ ՎճԱ-
րած է առաւել քան 27,000,000 անգլ.

Ընդհ. գործակալ Պալար, եւ գլու-
սաւոր: Գ. ՎԱՐԴԱՆԵԱՆ

Վերալիս խան, Պանֆ Օբոմանի Բոյ
Ղալաքիա:

Փոխ գործակալ Ե. Պալար
ՌՈՒԲ. ԱՐԻԿԵԱՆ ԺԻՎԱՆ ԹԵՔԵՆԱՆ

Էմբն պէյ խան Ֆնսղլեան խան

Զեհիլ ըրդեհիւ

10—10

Ա. ԷՆԳՍԷՐՃԵԱՆ

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Գ. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

ԲԵՐԼ. ՄԵԾ ՓՈՂՈՑ ԹԻՒ 200

Կալաթա-Սէրայի Լիսէին դ'մ.

Գո. Եո. Նբ. օրերը առաւօտեան կանու.

խան մինչեւ իրիկուան օ. 11¹/₂

Բո. Գո. Ուր. օրերը 6ին մինչեւ 11¹/₂

Կիրակի օրերը ժամադրութեամբ 8—10

ՑԱՄԱԲԱՅԻՆ ԵԻՐՈՊԱՅԻ ՄԵԾԱԳՈՅՆ ԱՊԱՅ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

ՎԻԲԹՈՐԻԱ ՏԸ ՊԵՐԼԷՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՄԷՆ ԴՐՈՒԹԻՒՆ ԿԸ ԳՈՐԾԱԴՐԷ

Ունի կեանքի, օժիշի, արկածի, ցման բոցակի նիւղեր
VICTORIA ՎԻԲԹՈՐԻԱ ՏԸ ՊԵՐԼԷՆ կեանքի ապահովագրութիւններ ունի թէ՛

DE

BERLIN Առանց բժշկական քննութեան եղած կեանքի ապահովագրութիւններ
բուն վճարումները շարաթական մասնավճարներով աեղի կունենան,

սկսեալ 5 շրջաշէն

Ապահովագրեալ գումար 1904ին Ֆր. 1,491,279

Պահեստի դրամ 1904ին 605,718,000

Հաստատուած 1853 սեպտ. 20ին ար-
քայախանութեամբ եւ ուղղակի
կառավարութեան հսկողութեան ներ-
քէն:

ԸՆԿ. ԴՐԱՄԱՏՈՒՆՆԵՐԸ

Օմ. Կայս. Պանքա

Եւ Քրէտի Լիոնէ

Լիազոր Ընդհ. Ներկայացուցիչ

Ա. Կ. ԼԻԻՉԷՆԱ

Կալաթա, Պերեհէք խան

Օրիանդ-Պանքի դեմ